




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1863

1925



Ա. ԿԱՐԻՆՅԱՆ

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ

(1878—1918).

(ԿԹԱՆՔԸ ՅԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅՈՒՆԸ)

2070

2001



482

ՅԿՈՒԳ
Ե-264

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

№ 319

1925

ՀՈՒԳ
Յ-264

այլ

№

ՍՈՑԻԱԼ-ԲԱՂԱՔԱԿԱՆ ՍԵՐԻԱ

2

Ա. ԿԱՐԻՆՅԱՆ

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ

(1878 — 1918).

(Կյանքը և գործունեությունը)



Հ.Ս.Խ.Հ.
ՄՈՍԿՎԱ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

№ 311
1925

26117-4-2.

ՄՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ


1878—1918

Շահումյանի կյանքը և հասարակական—քաղաքական գործունեությունը չափազանց սերտ կերպով կապված է համակրվկասյան բանվորական շարժման հետ: Իր կյանքի մեծ մասը Շահումյանը անց է կացրել Անդրկովկասում: Առանձնապես ուժեղ է յեղել նրա կապը Բազմի պրոլետարիատի հետ:

Ահա ինչու նրա հոգվածները և ճառերը ներկայացնում են առանձին արժեք կովկասյան պրոլետարիատի և կովկասյան նորագույն կյանքի պատմության համար: Հակայական նյութ են մատակարարում նրանք Բազմի պրոլետարիատի զարգացման և նրա ազատամարտի վերլուծման ուսումնասիրության համար: Լուսաբանելով անցյալի պատմությունը, նրանք միաժամանակ գծում են միջազգայնության և հեղափոխական ակտիվության այն ուղին, վորն ոգնել է մեծամասնական կուսակցության և նպաստել նրա այսօրվա հաղթանակին:

I

ՄՏԵՓԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ծնվել է Թիֆլիսում 1878 թվին: Սակայն և՛ մանկության ժամանակ, և՛ պատանեկության տարիներին նա հաճախ է այցելել Թիֆլիսի և Յերևանյան նահանգի մեջ ընկած լեռնային Լոռու գյուղական վայրերը: Հետագայում նա հույնիսկ ընտրը-



5595-56

վել է Լոռվա (Բորչալուի) կազմակերպության կողմից վորպես Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատական Բանվորական կուսակցության հերթական համագումարներից մեկի ներկայացուցիչ:

Լոռին և մանավանդ Լոռվա լեռնային շրջանը դեռ 80—90-ական թվականներին մեկն էր Անդրկովկասի ամենաբնորոշ վայրերից:

Նա յենթարկվել էր ամենամեծ չափով նորածին կապիտալիզմի ազդեցությանը և ներկայացնում էր իրենից տնտեսապես քայքայվող աղքատ տնտեսությունների մի շրջան:

Առանձնապես ծանր էր չքավոր գյուղացիության կացությունը:

Այդ գյուղացիությունը խեղդվում էր բառացի կերպով վաշխառուական կապիտալի մագիլներում: Գյուղացիության շերտավորումը և բնակչության անապահովությունը ստացել էին այնքան լայն բնավորություն, վոր հայտնի էին ժամանակակից վիպագիրների ամենամեծ շրջաններին: Իր ժամանակ արձանագրել է այդ շեշտված յերեվոյթը նույնիսկ Հովհաննես Թումանյանը: Նրա հայտնի յերգը «Պարտատերի» մասին անցյալի բնորոշ արտացոլումներից մեկն է: Ըստ յերևոյթին Լոռվա շրջանի «ավազակություն» էլ կապված էր գյուղական տնտեսության քայքայման հետ: Վաշխառուների և աղքատների «ուժեղների» և «թուլերի» յուրորինակ պայքարը փաստորեն պառակտել էր լոռեցի գյուղացիներին յերկու մասի: Յեւ այդպիսով այդտեղ հեղափոխական գյուղացիական շարժման համար նպաստավոր հող էր ստեղծվել դեռ անցյալ դարաշրջանի մայրամուտին:

Ամենից շատ յենթարկվել էր դասակարգային շերտավորման Լոռվա այն մասը, վորն ընկած էր «Թիֆլիս—Ղարաբիլիս» յերկաթուղու գծի վրա: Այդ գծի յերկու կողմն ընկած գրեթե բոլոր գյուղերն էլ տնտեսական նոր պայմանների հետեւանքով ստեղծել էին չքավոր և սա-

կավահող գյուղացիների հսկայական կոնտինգենտ: Յեւ այդ վայրերից էլ հոսում էին դեպի Թիֆլիս և Բագու սակավահող շինականների, անապահով աղքատների և ամեն ինչ կորցրած պառակտների անընդհատ խմբերը: Մեծ էր առանձնապես գաղթականների այդ պրոցեսը պղնձահանքերի մոտ ընկած բայոնում: Գյուղից գաղթող շինականների մի վորոշ մասը հաստատվել էր այստեղ Ալլավերդու գործարանում (Սանահին գյուղի մոտ) և հենց այստեղ էլ կազմակերպվել էր Լոռվա ապագա պրոլետարիատի առաջին խմբակը: Պղնձահանքերում աշխատում էին մի քանի հազար պրոլետարներ, վորոնց ճնշող մեծամասնությունը կապված էր անքակտելի թելերով գյուղական իր հայրենիքի հետ¹⁾: Սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունը իր գործունեության նախնական շրջանում բավական չափով համակիրներ է ունեցել պղնձահանքերի մոտ ընկած գյուղերում—Հաղբատ, Սանահին, Ուզունլար և այլ վայրերում: Պետք է ասել, վոր բոլոր այդ շրջաններում, թե՛ պղնձահանքերում և թե՛ նաև գյուղերում բանվորական ու գյուղացիական մասսաների շահագործումը խիստ մեծ էր—իսկ աշխատավորության գիտակցությունը չափազանց թույլ:

Շահումյան—պատանին չէր կարող չտեսնել փոփոխված գյուղի «նոր» այդ դրվագները, չէր կարող չտեսնել, վորովհետև նոր այդ պատկերը չափազանց արտասովոր էր Լոռվա լեռնաշղթայի անգոր գյուղերի ընդհանուր ֆոնի համար: Գուցե դրանով էլ պիտի բացատրել այն, վոր դեռ պատանեկության տարիներին Շահումյանը ամենամեծ հետաքրքրությամբ էր վերաբերվում դեպի սոցիալական գիտությունները: Ականատեսների և ժամա-

¹⁾ Տես այդ մասին Յ. Ե. Մելիք-Յուլյանի «Չորս տարի» (1903—1907) Յերեւան, 1924 թ. Ալլավերդու շրջանի բանվորական շարժման մասին առանձնապես՝ «Полный текст протоколов Лондонск. Съезда Р.С.Д.Р.П.», 1909. Париж, էջ 175—177:

նակակիցների վկայությամբ նրա վրա ամենամեծ ազդեցություն երթողել այդ ժամանակ հայ տնտեսագետ—նարողնիկ Սիմեոն Զավարյանը¹⁾։

Շահումյանի ուսանող ընկերները հաստատում են, վոր ուսանում եր նա շատ լավ և համարվում եր Թիֆլիսի բեալական դպրոցի ամենաընդունակ ուսանողներից մեկը։ Սակայն այդ դպրոցի պաշտոնական ղեկավարներով նա չեւ բավարարվում և, չսահմանափակվելով դպրոցական ծրագրի նեղ շրջաններով, լրացնում եր իր գիտելիքներն ընթերցանությամբ։

Շատ բնորոշ ե այն, վոր դեռ այդ ժամանակ, չորրորդ դասարանի աշակերտ Շահումյանը հայտնի յեր ուսանողական լայն շրջաններին և բացառիկ սեր եր վայելում նրանց կողմից։

Շահումյանը այդ ժամանակ ժամանակակիցների վկայությամբ աշխատում եր մեծ յեռանդով անլեզալ և հեղափոխական աշակերտական կազմակերպությունների մեջ։ «Ծիածան» վերնագրով թերթը, վոր հրատարակվում

¹⁾ Սիմեոն Զավարյանը անցյալում յեղել ե «Դաշնակցություն» կուսակցության ամենայնուհուն գործիչներից։ Սակայն հետագայում իր կյանքի վերջին տարիներին նրա կապը կուսակցության հետ ըստ յերևույթին բավական մեծ չափով թուլացել ե։ Այդ ժամանակ նա նույնիսկ հալածանքի ե յենթարկվել ղեկավար դաշնակցականների կողմից։ Ս. Զավարյանը միակն և հայ—նարողնիկ դաշնակցականներից, վոր մեծագույն չափով ազդվել ե մարքսիզմից։ Դրա համար ել տնտեսական նրա ուսումնասիրությունները չեն կորցրել իրենց արժեքը այժմ ել։ 1) Ղաբաբադի տնտեսական պայմանները և սովը (ռուսերեն) «Экономические условия Карабага и голод» 1906—1907 г. С.П.Б. 2) «Գյուղական տնտեսության զարգացման պայմանները Ղարսի շրջանում և Յերեվանի նահանգում» (ռուսերեն), 3) «Հողային տուրքը և հողային հարկերն Անդրկովկասում»։ Առաջին յերկու աշխատությունները լույս են տեսել առանձին և ռուսերեն լեզվով։ Յերկրորդը հոգեվածաշարք ե, վոր տպվել ե «Մուրճ»-ում 1901-ին (Լ. Սարգսյանի խմբագրությամբ)։

եր աշակերտական մի խմբակի ձեռներեցությամբ, լույս եր տեսնում Շահումյանի խմբագրությամբ։ Դա խմորատիպ մի ժուրնալ եր և ժամանակի վոգու համաձայն կըրում եր ազգային հեղափոխական բնույթ։ Ըստ յերևույթին աշակերտական այդ խմբակն ել գերծ չեւ այն նացիոնալիզմից, վորն այնքան իշխող և տիրական եր իննսունական թվականներին։

Սակայն յերկար չի տևում բոմանտիքական պատանեկության այս շրջանը։

Շահումյանի պատանեկությունը անցնում ե խիստ ծանր նյութական պայմաններում։ Արգեն հինգերորդ դասարանից նա ստիպված եր մասնավոր դասեր տալ և դըրանով ոժանդակել ընտանիքին։ Միևնույն տնտեսական ծանր պայմանների պատճառով նա ընդհատում ե հետագայում իր բարձրագույն ուսումը Բիգայում և վերադառնում ե նորից Թիֆլիս, ուր ծառայության ե մտնում սրբազրիչի պաշտոնով «Новое Обозрение» թերթում։

1900 թվին Շահումյանին աշոգվում ե գնալ Բիգա և մտնել այնտեղի պոլիտեխնիքական ինստիտուտը։

Յեռուն մի շրջան եր այդ եպոխան, առանձնապես կենդանի ուսանողական բոլոր կենտրոններում։ Ուսանողությունը, վորպես մտավորականություն ավելի յերիտասարդ հատված, խոշորագույն դեր եր կատարում հասարակական շարժման մեջ։ Նա—հեղափոխական և «կարմիր» եր, անձնվեր և պայքարող։ Նրա ուրույն այդ հեղափոխականությունը կազմակերպվել եր մի կողմից աբսոլյուտիզմի դեմ պայքարող «հասարակություն», իսկ մյուս կողմից ել բանվորական գործադուլների և ցույցերի ազդեցության ներքո։ Պրոլետարիատի ակտիվ գործունեությունը ամենից ավելի ազդեցություն եր թողնում ուսանողության չքավոր տարրերի վրա, վորոնք բոլորն ել գանվում եյին պրոլետարիատի գիտական ուսմունքի—մարքսիզմի հզորավոր ազդեցության ներքո։

Բիգայումն ել նկատելի յեր այդ բոլորը։

Այդտեղ ել կային մարքսիստական ուսանողական խմբակներ, վորոնք հետևում էին բանվորական շարժմանը և գործում էին հեղափոխական անլեզալ խմբակներում:

Շահումյանը շատ շուտ դառնում է հենց այդ խմբակներից մեկի—Րիգայի մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ազդեցիկ անդամներից մեկը: Թե վորքան մեծ եր նրա ազդեցությունը, յերևում է նրանից, վոր հիշյալ կազմակերպությունը Շահումյանին եր ընտրել վորպես Պոլիտեխնիկումի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ներկայացուցիչ հեղափոխական ուսանողության առաջին համառուսական համագումարի համար ¹⁾:

Այդպիսով մոտավորապես այդ տարիներին ել գծվում է վերջնականապես Շահումյանի ուղին:

Պատանեկական ումանտիզմից նա բնա-անհրաժեշտորեն անցնում է դեպի հեղափոխական մարքսիզմը: Այդ ուղիի վրա յել մնում է նա մինչև վերջը:

¹⁾ Շահումյանի կյանքի այդ շրջանի մասին հետաքրքրական են ընկ. Ա. ր. Մելիքյանի հաղորդած տեղեկությունները (Տե՛ս՝ «Նոր Աշխարհ» 1922, № 2. սեպտեմբեր—Հիշողություններ Ստեփան Շահումյանի մասին եջ 153—157): Ընկ. Մելիքյանը գտնում է, վորնա Րիգայում 1901 թվին հայ ուսանողական համագումարի աշխատանքների ընթացքում «վոչ մի անգամ չեղաված կերպով չի դրսևորել իր սոցիալ-դեմոկրատականությունը — թեև նույն այդ ժամանակ նա ամենավճռական կերպով դուրս է յեկել հայ աղայականների դեմ և շեղտել է, վոր նրանք «ի-դեալականացնում են ազգային չուխան ու փափախը»: Միաժամանակ Շահումյանը անհրաժեշտ է համարել հայ ուսանողության մասնակցությունը համառուսողական շարժումներին:

1902 թ. փետրվար 2-ից մինչև 8-ը կայանում է ռուս ուսանողության համագումարը: Րիգայի ուսանողության կողմից մասնակցում եր համագումարին Շահումյանը, վորը պնդում եր «թե համալսարանական ազատություններն անիրագործելի են, մինչև վոր չխորտակվի քաղաքական գլխավոր խոչընդոտը, այն է ցարիզմը»: Ապա

Պոլիտեխնիկումի մեջ Շահումյանը այնքան ել յերկար չի մնում: Նրա գործունեությունը հեղափոխական կազմակերպությունների մեջ չեր կարող չզբաղել ռուսական ցարիզմի միշտ արթուն պահապանների ուշադրությունը: 1901-ին արդեն Րիգայի ադմինիստրացիայի կարգադրությամբ նա արտաքսվում է ինստիտուտից և ուղարկվում է Անդրկովկաս: Սակայն այս անգամ ել, վերադառնալով հայրենիք Շահումյանը յերկար չի մնում Թիֆլիսում:

1902-ին նա ուղևորվում է Բերլին, ուր սկսում է պարապել հասարակական-տնտեսական գիտելիքների ուսումնասիրությամբ: Բերլինի համալսարանում նա ուսանում եր փիլիսոփայական ֆակուլտետի պետական գիտությունների բաժնում: Ականատեսները հաստատում են, վոր այստեղ նա յերկու տարի աշխատել է Շմոլլերի, Վագների և մյուս հայտնի տնտեսագետների սեմինարիաներում:

Չափազանց արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Շահումյանի կյանքի հենց այդ շրջանի մասին, նրա

համագումարը հրատարակում է մի կոչ:—«Նիստերից մեկում,—կարդում ենք Մելիքյանի միևնույն հոդվածում, Շահումյանն արտահայտեց այն միտքը, թե ուսանողական շարժումներն ինքնամիտք շարժումներ լինել չեն կարող, թե ուսանողության խոշոր մասը շուտով հոգնելու և լքվելու է և թե նրա հեղափոխական մասը պիտի հարի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը: Նրան չհաջողվեց վերջին կետն ամբողջապես մոցնել կոչի մեջ, վորովհետև Րիգայի ուսանողական մյուս ներկայացուցիչը (Պապեռնա աղբանուհով) դեմ արտահայտվեց այդ կետին, վորը ձևակերպվեց կոմպրոմիսային ձևով՝ «ռուս ուսանողությունը պիտի հարի «սոցիալիստական» կուսակցություններին»: Վոչ մի կասկած այլևս չի կարող լինել, վոր այդ շրջանում Շահումյանը համակրում եր սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը: Բեկումն նրա մեջ արդեն կատարվել եր, և վերադարձ դեպի հինը, քնորոշը չեր կարող այլևս տեղի ունենալ» (Մելիքյան. եջ 156):

հին ծանոթներից և դասակիցներից—Մանուշարյանը¹⁾։

Ուսանողության տարիներին ևս Շահումյանը միանգամայն ակտիվ էր տանում իր գիտական աշխատանքները և յերբեք չէր յենթարկվում ժամանակակից տնտեսագետների հայտնի տեսաբան-ավտորիտետների ազդեցությանը։ Դեռ այդ ժամանակ նա միանգամայն հաստատ համոզումների տեղ գործիչ էր և ինչպես նկատում է Մանուշարյանը—յուրացնում էր վոչ թե հիպոթեզները յեվ տեսությունները, այլ հում նյութեր, նկարագրություններ յեվ թվական տեղեկություններ։ Ամբողջ այդ հում նյութը սովորաբար նա ոգտագործում էր պատմության մարքսիստական տեսաբանության հիմնավորման համար։

Բերլինում նա ծանոթանում է նաև Գերման Սոցիալ-դեմոկրատիայի հայտնի տեսաբանների—Կաուցկու, Հենրիխ Կոնսովի, Ֆրանց Մերինգի և Եգվարդ Ֆուկսի հետ։

Ճիշտ այդ ժամանակ սաստկացել էր պայքարը Գերման սոցիալ-դեմոկրատիայի յերկու թեզերի միջև։ Հիշված խմբակը կանգնած էր ձախ կողմը և կռիվ էր մղում բեվիզիոնիստական-բեֆորմիստական հոսանքի դեմ։ Շնորհիվ հենց այդ գաղափարական բաղխմանը ուղղափառ մարքսիստների գրական-հասարակական բոլոր ձեռնարկությունները հիշված շրջանում կրում էին բավական վորոշակի հեղափոխական բնույթ։

Գերման սոցիալ-դեմոկրատների այդ խմբակի հետ ել կապվում է Շահումյանը։ Նա հայտնի յեր նրա անդամներին շատերին։ Հաճախ էր հաճախում մարքսիզմի քննության նվիրված ժողովները, մասնակցում էր բանվորական միախնդրերին և ժողովներին։ Այդ ժամանակվա քաղաքական հոստորներից ամենամեծ ազդեցությունը Շահումյանի վրա, Մանուշարյանի վկայությամբ, թողել էր Ավգուստ Բեբելը։ Բեբելյան հոստորության ինքնահատուկ ձևը, նրա

արտաքինով չափազանց հասարակ և ներքին բովանդակությամբ հարուստ և փաստալից ճառերի ձևերն յուրացվել էին հետագայում լիովին Շահումյանի կողմից։

Շատ բնորոշ է այն, վոր ձիշտ այդ շրջանում ել կապարվում է Շահումյանի մեծամասնական աշխարհայեցողությունը։ Ուսանելով համալսարանում և աշխատելով գիտական սեմինարիայում, նա միաժամանակ ամենասերտ կերպով կապված էր Բերլինի ռուսական-սոցիալ-դեմոկրատական կազմակերպության կյանքի հետ։ Բերլինի կազմակերպությունը այդ շրջանում իր մեծամասնությամբ կանգնած էր մեծամասնական ֆրակցիայի տեսակետի վրա։ «Շատերը մեզնից¹⁾», պատմում է Մանուշարյանը, մեծ անհանգստությամբ էին վերաբերվում կուսակցության մեջ սկսվող պառակտման և բացասաբար էին գնահատում այն ընկերներին, վորոնք վոչ միայն սուր կերպով էին առաջադրում վեճի առարկան, այլև միևնույն սրությունը ել լուծում էին տարաձայնություն առաջ բերող հարցերը»։

«Մեզմ գրեթե կանացիական ընավորություն ունեցող յեվ անձնական հարաբերությունների մեջ մարդկանց համակերպվող—նա այնուամենայնիվ միանգամայն անսպասելի կերպով մերկացրեց մեր առաջ իր ընավորության նոր գիծը—հաստատակամությունը յեվ ծայրահեղ վճռականությունը հասարակական խնդիրների նկատմամբ։ Այդ հաստատակամությունը նրա մոտ մեր կարծիքով, համում էր զոգմատիզմի և մենք շատ անգամ էինք կնքում նրան «քարասիրտ» այն տերմինով, վորով վորակվում էին այն ժամանակ բոլշևիկները կուսակցական շրջաններում։ Բախի, Լյադովի հետ միասին նա ևս կուսակցության Բերլինի կոմիտեյում գրավել էր ամենաանհաշտ դիրքերը։ Սակայն

¹⁾ Մանուշարյանի հիշողությունները Շահումյանի մասին ապվել են սկզբում «Бакинский Рабочий» որաթերթի վերոհիշյալ համարում, իսկ հետագայում ել լույս են տեսել միևնույն թերթի խմբագրության հրատարակած առանձին ժողովածուի մեջ «Памяти 26 бакинских комиссаров». Баку 1922.

¹⁾ Տես՝ «Бакинский Рабочий» № 211 (643). за 1922 год, от 20 сентября.

այդ հանգամանքը ամենավին չէր փնտրում Շահումյանի անձնավորութեան հմայքին այն ընկերներին մոտ, վորոնք կազմակերպչական և տակտիքական խնդիրներում տարակարծիք եյին նրա հետ և չէին ցանկանում «գլավկիստներ» դառնալ»:

Այդ բնորոշ նախադասութեան մեջ շատ լավ է գծված իսկական Շահումյանը — «Մեղմ յեվ համակերպվող անճնական խնդիրների նկատմամբ» յեվ «ամուր ու հաստատակամ հասարակական հարցերում»:

Ճիշտ այդպես են բնորոշում նրան բոլոր մոտիկներն ու ընկերները:

Շահումյանի «անձնավորութեան հմայիչ աղդեցութեամբ» ել պետք է բացատրել նրա արտասովոր ազդեցութունը հակաբոլշևիկներին տրամադրված հետամնաց և կիսագիտակից մասսաների վրա: Շահումյանի մեկ հասարակ խոսքն արդեն բաց էր անում մասսաների առաջ նորանոր հորիզոններ և հսկայական հատվածներով նետում էր նրանց մեր կուսակցութեան շարքերը:

Այդ հանգամանքը լավ էր հայտնի պրոլետարիատի հակառակորդներին:

Մեր թշնամիներից շատ շատերը լուրջ կերպով վախենում էին և յերբեք չէին համարձակվում բացորոշ կերպով դուրս գալ Շահումյանի դեմ: Ամեն անգամ, յերբ սկսվում էր գաղափարական վորևէ պայքար — Շահումյանի շուրջն էին խմբվում վոչ միայն կուսակցական գործիչներ, այլ նաև համակիր անկուսակցականների միացյալ խմբակների ամբակուռ այնպիսի շարքեր, վոր արդեն այդ հանգամանքը Շահումյանի անունը դարձնում էր կատարելապես անխոցելի:

Առանձնապես նկատելի յե դառնում այդ 1917—18 թվականներին, բանվորա-գյուղացիական հեղափոխութեան և բուրժուա-կալվածատիրական հակահեղափոխութեան անողորմ պայքարի սուր որերին: Վոչ վոք այդ ժամանակ չէր վստահանում բաց յերեսով դուրս գալ Շահումյանի

դեմ և անվանարկել նրան — չնայած նույնիսկ նրան, վոր ատելութունը մեծամասնականների դեմ խիստ մեծ էր հիշյալ շրջաններում: Չէին համարձակվում այդ անել թշնամիները, վորովհետև գիտեին, վոր ամեն մի հարձակում ուղղված Շահումյանի դեմ ամենից առաջ կխափանվի հենց անկուսակցական պրոլետարական մասսաների կողմից:

Այդքան մեծ էր նրա հմայքը ժողովրդական լայն շրջաններում:

Յեվ հասկանալի է, թե ինչու էր այդպես:

Շահումյանի վողջ կյանքը, նրա յերկարատև աշխատանքը և հեղափոխական գործունեյութունն անցել էին մասսաների աչքերի առաջ:

Պրոլետարիատը գիտեր և ճանաչում էր նրան ավելի քան լավ:

Պրոլետարիատը գիտեր, վոր Շահումյանը մեկն է յեղակի այն գործիչներից, վորոնք նվիրվել են պրոլետարական շարժմանը լիովին և դրա համար մի քանի անգամ հալածվել են ցարական կառավարութեան վոստիկանութեան կողմից:

Հայտնի էր նաև այն, վոր հակառակ շատ շատերին, Շահումյանը չնայած նույնիսկ նրան, վոր ծանրաբեռնված էր մեծ ընտանիքով և սիրելի մոտիկներով — յերբեք չէր սուգվում նեղ ընտանեկան շրջանի մեջ, այլ միշտ և ամենուրեք ապրում էր հեղափոխական գործի շահերով:

Այդ կողմից նա հաճախ հիշեցնում էր սեկտանտ-հեղափոխականներին այս խոսքի լավագույն իմաստով:

Յեվ փնքը Շահումյանի ընտանիքը ևս գիտեր այդ: Նա կանգնած էր նրա հետ միևնույն շարքերում:

Հեղափոխականի ընտանիքի կացութունը այդ ժամանակ նույնքան ծանր էր, ինչպես և հեղափոխական գործչի դրութունը: Յարական կառավարութեան հարվածները ընկոշեցին դիպչում էին և ընտանիքին ու վերջինը

գրեթե միշտ մասնակցում եր Շահումյանի աստանդական կյանքին:

II

Շահումյանի գործունեությունը արտասահմանում նույն բնույթն էր կրում, ինչպես և Րիգայում—այն տարբերությունը միայն, վոր այս անգամ արդեն նա ավելի պատրաստված և զինված էր քան 1900 թվին: Առանձնապես մեծ էր Շահումյանի ազդեցությունը այդ ժամանակ կովկասի սոցիալ-դեմոկրատներին վրա:

Կովկասցիներին մեծամասնությունը համարում էին նրան «պարագլուխ» և ապագա կովկասյան բանվորական շարժան ղեկավար:

Մոտավորապես այդ մոմենտից ել սկսվում է Շահումյանի հետևողական պայքարը կովկասյան նացիոնալիզմի իդեոլոգիայի դեմ:

Ազգայնականությունը ամենից ուժեղ էր հայ ուսանողության շրջաններում: Հայդուկային բուհանդիպակային յուրորինակ եպոխան էր դա, յերբ համայն հայ հասարակությունը ապրում էր Գամառ-Քաթիպայի և Րաֆֆիի միամիտ քարոզներով, յերբ ամեն ինչ հիմնավորվում էր ազգայնական մոտիվներով: Յեվ այդ հողի վրա ամուր կերպով հաստատվել էր կովկասահայ բուրժուազիայի ռազմական կազմակերպությունը—Դաշնակցությունը:

Չափազանց մեծ յեռանդ և տոկունություն էր պետք համատարած նացիոնալիզմը հաղթահարելու համար: Չափազանց վճռական գիծ էր պետք հայկական բուհանդիպակային քննադատության և խարազանման համար: Սոցիալ-դեմոկրատական փոքրիկ այն խմբակը, վոր ստեղծվել էր արտասահմանյան ուսանողության համախմբման կենտրոնական վայրերում, զբաղված էր գլխավորապես այդ գործով: Մասսաների քաղաքական դաստիարակության համար հիշյալ կազմակերպությունը մի կողմից պրոպագանդ էր մղում ժողովների և դասախոսությունների մի-

ջոցով, իսկ մյուս կողմից ել հրատարակում էր ագիտացիոն բրոշյուրներ և թուղթիկներ: Յեվ ահա պրոպագանդիստական այդ գործունեություն մեջ ամենամոտ մասնակցություն է ունենում Շահումյանը: Նա է լինում առաջինը և միակը, վոր գրում է իր հայանի այն բեֆերատը «Ազգային հարցի» մասին, վորի ձեռագիր-որինակը պատում էր արտասահմանում ձեռքից ձեռք: Հետագայում այդ բեֆերատը լույս է տեսնում առանձին բրոշյուրով սոցիալ-դեմոկրատական «Կայծ» հրատարակչության ձեռներեցությամբ (Թիֆլիս. 1906 թվին):

Բերլինի սոցիալ-դեմոկրատ կովկասցիների առաջարկով Կարլ Կառլսկին գրել էր իր «Երֆուրտի ծրագրի» հայերեն թարգմանության առաջաբանը: Դա բավական մեծ հոգված էր, վոր կոչվում էր «Ազգային հարցը Ռուսիայում»: Հետագայում 1904 թվին այդ բրոշյուրը լույս է տեսնում Ռուսաստանում առանձին հրատարակչությամբ: Միևնույն ժամանակ ձեռներեցությամբ կազմակերպվում է նաև մարքսիստական մատչելի գրականության հրատարակչության գործը հայերեն և վրացերեն լեզուներով:

Ականատեսների վկայությամբ Շահումյանը բացի վերոհիշյալ բեֆերատից գրել էր մոտավորապես այդ ժամանակ նաև մի ուրիշ քաղաքական գեկուցում «Մեր տակտիքական տարածայնությունների մասին», ուր նա հակառակ բեֆորմիստական ոպպորտունիզմին, հիմնավորում էր հեղափոխական մարքսիզմի դադափարը: Այդ բեֆերատը մի քանի անգամ քննության է առնվել ուսանողական տարբեր խմբակներում և յենթարկվել է ամենատաք քննություն: Այդպես էր Շահումյանը արտասահմանում:

Գիտական և քաղաքական ափսիվ այդ գործունեությունն էլ ամրացնում են նրա թեորիական աշխարհայացողությունը և պատրաստում են նրանից հետևողական մարքսիզմի յեռանդուն գործիչ: Կովկաս է գալիս նա միանգամայն կադապարված մարքսիստական-մեծամասնական հայացքներով:

Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի Լոնդոնի համագումարից (1907 թ.) հետո նա արդեն մեծամասնական ֆրակցիոններ եր և վորպես այդպիսին ել հայտնի յեր կուսակցական լայն շրջաններին:

Արտասահմանից դառնալով հայրենիք, Շահումյանը սկսում ե կուսակցական աշխատանք արդեն կուսակցական վոգով:

Կովկասյան միջավայրում նա գործում եր յերկու ուղղությամբ: Մի կողմից նա կովում եր հայկական նացիոնալիզմի դեմ, իսկ մյուս կողմից համակովկասյան մենշեվիզմի դեմ:

Կանգնելով «Դաշնակցության» դեմ, Շահումյանը փաստորեն կռիվ եր մղում հայդուկային վողջ աշխարհայեցողության կամ հայկական «ուսկմական նացիոնալիզմի» դեմ: Այդպես եր նա բնորոշել «Դաշնակցությունը»: Այդ կռիվը նացիոնալիզմի դեմ Շահումյանը համարում եր չափազանց կարևոր և անհրաժեշտ: Նա խորապես համոզված եր, վոր նացիոնալիստական կուսակցությունների պրոպագանդը, և մասնավորապես «Դաշնակցությունը» խափանարար մի խոչընդոտ ե միջազգային բանվորական շարժման ուղիի վրա: Հայ նացիոնալիստները, Շահումյանի համոզմամբ, կտրում եյին պրոլետարական մասսաներից հայ բանվորներին և վայրենի ազգային պատգամներով ոժանդակում եյին համակովկասյան նացիոնալիզմի բարգավաճման: Իսկ դրանով նրանք անհրաժեշտաբար հող եյին պատրաստում ապագա ազգային պատերազմների և բաղխումների համար:

Կանգնելով նախնական իր հողվածներից մեկում «Դաշնակցության» և բուրժուազիայի փոխհարաբերության վրա, Շահումյանը հետևյալ խոսքերով եր բնորոշել «Դաշնակցության» դերը՝ «Հայ բուրժուազիան աճում ու ամրապնդվում եր, շահագործելով հայ պրոլետարիատը, թալանելով ու ավերելով քաղաքի և գյուղի չքավոր խավերը: «Դաշնակցությունը» հանգիստ ու անդորր դիտում եր հայ բուրժուազիայի սկզբնական կուտակման այդ չքնաղ պատ-


կերը: Սակայն բավական եր շահագործվող մասսային գլուխ բարձրացնել իր կեղեքիչները դեմ, բավական եր դասակարգային պայքարի ամենաչնչին արտահայտություն ընդդեմ հայ բուրժուազիայի, վորպեսզի հնչեր «Դաշնակցության» «հայրենասիրական» վայնասունը, վորով նա հիշեցնում եր բանվորության, վոր բոլոր հայերը—յեղբայրներ են, վոր հայերի մեջ դասակարգային պայքար տեղի չպետք ե ունենա, վորովհետև հայերն ունեն ընդհանուր ազգային թշնամիներ ու ընդհանուր ազգային իրեքալ»...

Ավելի վորոշ ե ընդգծում Շահումյանը միևնույն թեզը հետևյալ նախադասության մեջ:

«... Հանձին Դաշնակցական կուսակցության կովկասայ բուրժուազիան ուներ հավատարիմ դաշնակից, իր շահերի գեղեցիկ թարգմանն ու պաշտպանը—և դրա համար ել նա ամենայն կերպ—նյութապես ու բարոյապես—աջակցում եր այդ կուսակցության»¹⁾:

Անցնելով Դաշնակցության «նոր» և «հեղափոխական» կուրսին Ս. Շահումյանը շեշտում ե, վոր այդ «կուրսը» մշակվել եր ժողովրդի քաղաքական սթափումը խափանելու նպատակով: Նա (այսինքն՝ Դաշնակցությունը) ընդունեց «ռուսահայ հարցի» գոյությունը, նպատակ ունենալով շարժման տալ իրեն, Դաշնակցության համար ցանկալի ազգային բնույթ և այդ շարժումը կուռ ու ամուր կերպով կապել տաճկահայ հարցի հետ, դա յենթարկել տաճկահայ հարցին: Նա մի քայլ առաջ գնաց զարթեցնող ժողովրդի հետ նպատակ ունենալով բռնել նրան յետևից ու շարժմանը հնարավորություն չըտալ ծավալվելու ու շեղվելու այդ կուսակցության իրեքալների ճանապարհից: Հանձին դաշնակցականների՝ «մեռյալները գնում եյին, վորպեսզի բռնեն կենդանիներին» (եջ 61—62):

¹⁾ Տես՝ «Գալիք ընտրություններն Թիֆլիսում և Դաշնակցություն կուսակցությունը». Ս. Շահումյան. հատոր I. եջ 59—60):



Պետք է ասել, վոր նույնիսկ այդ հեռու անցյալում, Շահումյանը նախագգում եր նացիոնալիզմի բացասական գործունեության հետեանքները և իմպերիալիստական պատերազմից ու ազգայնական կովկասյան Հանրապետությունների կազմակերպումից շատ առաջ նախագգուշացնում եր միամիտներին: Հենց դրա համար ել յեղնելով միջազգայնական հիմնական իր յեղակետից նա փաստաբեր եր համարում ամեն մի զիջումն կամ թեքումն հոգուտ նացիոնալիզմի: Բնորոշ եր այդ կողմից նրա դիրքն և քաղաքականությունը սոցիալ-դեմոկրատիայի այսպես կոչված «ազգային» կազմակերպությունների նկատմամբ:

Անդրկովկասում հիշյալ կազմակերպություններից ամենահայտնին այսպես կոչված «Սոցիալ—Դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունն եր»: Այդ կազմակերպությունը կուսակցության կազմակերպչական հիմքի նկատմամբ պաշտպանում եր հրեական «Բունդի» կազմակերպչական—ազգային սիստեմը:

«Հատուկ», կամ ինչպես սիրում եյին ասել հիշյալ կազմակերպության տեսաբանները՝ հայ իրականության սպեցիֆիկ պայմանները թելադրում են ուրույն կերպ մոտենալ հայ պրոլետարիատի քաղաքական դաստիարակման գործին և մշակել առանձին մեթոդ և սիստեմ հայ կյանքի կոնկրետ լուսաբանության, «սպեցիֆիկ մեթոդներ» պրոպագանդի համար: Ահա այդ նպատակների լավագույն իրագործման համար ել նրանք անհրաժեշտ եյին համարում Սոցիալ-դեմոկրատական հայկական կազմակերպության հատուկ այնպիսի կազմակերպությունը, վորը իրավունք պիտի ունենար անկախորեն վորոշել թե՛ հայ իրականության վերլուծության և թե՛ հայ պրոլետարիատի քաղաքական դաստիարակությանը վերաբերվող խնդիրները:

Շահումյանը հայ Ս-Դ. կազմակերպության առանձին գոյությունը համարում եր ավելորդ և փաստակար: Նա համոզված եր նրանում, վոր այդ կազմակերպության ինք-

նուրույն և անկախ գոծունեությունը նպաստում է պրոլետարական շարքերի քայքայմանը և բանվորական միացյալ բանակի առանձին ազգային հատվածների մեկուսացմանը:

Ահա ինչու նա սկզբից մինչև վերջ անողոք պայքար եր մղում հայկական բունդականների պարագլուխների և տեսաբանների դեմ:

Հետագայում Շահումյանի մարգարետության շատ և շատ կետերն իրականանում են: Հայ Ս-Դ. Բ. կազմակերպության ավելի յերիտասարդ և հեղափոխական տարրերը հետզհետե բաժանվում են կազմակերպությունից և մրտնույնում են Ռուսաստանի Ս-Դ. Բ. կուսակցության Բագվա կազմակերպության մեջ արդեն 1907-1908 թվականներին: Հայ բանվորական կազմակերպության մեջ դրանից հետո մնում է աննշան և իր բովանդակությամբ ինտելիգենտական մի խմբակ, վորն իմպերիալիստական պատերազմի որերին կանգնում է Պետլևսկույան (պաշտպանողական) տեսակետի վրա և շատ շուտով դառնում է շատ սովորական նացիոնալիստական կազմակերպություն: Վերջինի յերկու ականավոր տեսաբանները դիմում են նույնիսկ ավելի վճռական քայլերի: Իմպերիալիստական պատերազմի որերին Բաշխի Իշխանյանը և Դավիթ Անանունը կանգնում են փաստորեն հայ բուրժուազիայի ռազմական կազմակերպության—«Դաշնակցության» կողքին և հիմնավորում են նացիոնալիստական պետության ելությունը:

Միաժամանակ տեսական այդ պայքարի հետ ընդդեմ նացիոնալիզմի և նացիոնալիստական թեքումների Շահումյանը վոչ պակաս յեռանդով կռվում եր նաև համակովկասյան մենշևիզմի դեմ: Անդրկովկասի մայրաքաղաքում—Թիֆլիսում նա այդ ժամանակ կուսակցության մեծամասնական Փրակցիայի ճանաչված պարագլուխն եր և խոշորագույն բարոյական ավտորիտետ ունեւ բանվոր դասակարգի լայնագույն մասսաների շրջանում: Յեւ Ստոկհոլմի համագումարում 1906 թվին և 1907-ին Լոնդոնի համագումարում

մարում Շահումյանը ներկայացնում էր Անդրկովկասյան Սոցիալ-դեմոկրատիայի մեծամասնական կազմակերպությունները: Ստոկհոլմի համագումարում նա Յերեանյան կազմակերպության ներկայացուցիչն էր, իսկ Լոնդոնի համագումարում ներկայացնում էր Լոռեցիներին (Բորչալուի կազմակերպություն¹): Վերջին համագումարից հետո Շահումյանը անցնում է Բագու, ուր միջավայրը ավելի յեռուն էր և ավելի նպատակահարմար: Այստեղ առաջադրվում էր մարքսիստական—հետևողական պրոպագանդի համար անհամեմատ ավելի լայն եր, քան Թիֆլիսյան նեղ միջավայրը:

Բագվում Շահումյանը իրեն ավելի ուժեղ էլ էր զգում. վորովհետև այստեղ իրապես գոյություն ունեւ իսկական ինդուստրիալ պրոլետարիատ, այլ խոսքով հեղափոխական այն մասսան, վորը միակ գրավականն է մարքսիզմի ծրագրային հիմունքների գործնական կիրառման: Ժամանակակիցների հիշողություններից, ժանդարմական վարչությունների զեկուցումներից և անցյալի գրական ուրիշ դուկումենտներից մեզ հայտնի է, վոր այդ շրջանում նա վարելիս է յեղել միաժամանակ և կազմակերպչական և գրական—պրոպագանդիստական աշխատանք:

Շահումյանը նախաշրջանի—ժողովրդական տների

1) Բորչալուի ընտրություններին Լոնդոնի համագումարի մանդատային հանձնաժողովի զեկուցման համաձայն մասնակցել են 1000 մարդուց ավելի, վորոնք ընտրել են յերկու ներկայացուցիչ: Ընտրությունները կայացել են գյուղական կոնֆերենցիաներում: Սակայն Ռ. Ս.-Դ. Բ. Կ. Թիֆլիսի կոմիտեն նկատի առնելով Բորչալուի գրուպայի մեծամասնական տրամադրությունը չի հաստատել ընտրությունները: Լոնդոնի համագումարի մանդատային հանձնաժողովը յերեք անգամ քննության է յենթարկել Բորչալուի մանդատների հարցը և 4 ձայնով ընդդեմ 1-ի հաստատել է այդ մանդատները: Թիֆլիսի կազմակերպության հիմնական առարկությունը այն էր, վոր «Բորչալուի գրուպայան 300 անգամ իսկ չունի» և միաժամանակ վարում է վոչ թե «սոցիալ-դեմոկրատական», այլ գեմոկրատական աշխատանք: Այդ առարկությունը մանդատների հաստատման կողմնակիցները պատասխանում էին, վոր

կառավարիչն էր: Իսկույն և յեթ անցնելով իր պաշտոնին նա իր շուրջն է հավաքում մեծամասնական հոսանքի պրոպագանդիստ ուժերն և կազմակերպում է մի շարք լեզալ դասախոսություններ բանվորական տարբեր կվարտաններում: Լեզալ այդ դասախոսությունների հասարակ թեմաները ինքնին վորոշում են արդեն, թե ինչ բովանդակություն կար նրանց մեջ: Դասախոսությունները նվիրված էին «Պրոֆեսիոնալ շարժման պատմությանը», «Բանվորական որենտդրության պատմական զարգացմանը», «Դասակարգի յեվ դասակարգերի մարքսիստական վերլուծությանը» և այլն և այլն:—Ժողովրդական տները դառել էին փաստորեն պրոպագանդայի անկյուններ և դա հայտնի էր նաև վոստիկանությունը:

Միաժամանակ «լեզալ» այդ աշխատանքի հետ Շահումյանը կարգում էր դասախոսություններ անլեզալ բանվորական ժողովներում, կազմում էր թուղիկներ և հավաքում էր ցրված ուժերը: Արտաքինով չափազանց հասարակ, կապույտ ուսական շապիկ հագած, միշտ յերիտասարդ և պարզ դեմքով այդ մտավորականը առաջին անգամից արդեն հմայում էր բանվորներին իր չափազանց

Բորչալուի կազմակերպությունը պաշտոնապես հաստատվել է 1906 թվին հուլիսին և նրա ներկայացուցիչը մասնակցել է յերկու խորհրդաժողովներին: Իր ժամանակ Թիֆլիսյան մենշևիկներին առաջարկվել է քննել կատարված ընտրությունները, սակայն Թիֆլիսի կազմակերպությունը ինքը չի ցանկացել կատարել այդ: Մանդատների հարցի առիթով խոսել է համագումարում և Շահումյանը (նրա ճառը մենք բերում ենք հավելվածի մեջ), վորը շեշտել է ի միջի այլոց այն, վոր կովկասյան մենշևիկներն ոգտագործելով իրենց պաշտոնական տիրապետությունը ամեն կերպ աշխատում են խանգարել մեծամասնականի ընտրության: Յեվ յերբ այդ չի հաջողվում տեղում—նրանք միևնույնը կրկնում են համագումարում: Ավելի մանրամասն այդ մասին՝ Лондонский Съезд Росс. Соц-Дем. Раб. Партии: Полный текст протоколов. Изд. Центрального Комитета. 1909. Paris. ԿՂ 99, 128, 175—177.

պարզ վերաբերմունքով:

1908-ին Շահումյանը աշխատակցում էր նաև մեծամասնական բոլոր թերթերին: Այդ ժամանակ Բագվում հրատարակվում էյին «Гудок» (Շչակ) շաբաթաթերթը, և Ռ. Ս.-Դ. Բ. Կ.-յան Բագվա կոմիտեյի որդան «Բագվա պրոլետար» (Бакинский Пролетарий) վոր լույս էր տեսնում անլեզու: Խմբագրական կոլլեգիայի անդամներից մեկն էր և Շահումյանը:

1907—90-ի շրջանում կուսակցական մամուլի դրուժյունը խիստ ծանր էր: Բագվա վոստիկանությունը ուներ ծառայողների և մշտական լրագրողների բավական մեծ խումբ և դրանց միջոցով կանոնավոր տեղեկություններ էր ստանում կուսակցական կյանքի և գործիչների մասին: Չնայած այդ խոչնդոտներին, Շահումյանը վոչ միայն մասնակցում էր մասսայական ժողովներին և դիսկուսիաներին, այլ և դեկավրում էր մեծամասնական կազմակերպության աշխատանքը: Հին կուսակցական գործիչներից Բագվում աշխատում էյին այդ շրջանում Ա. Ենուկիձեն, Կոբան (Ստալինը), Տիմոֆեյը (Սպանդարյան), Ալյոշան (Ջապարիձե): Մեծամասնական կազմակերպությունը հետզհետե մեծանում էր և ուներ բավական լայն հիմք կուսակցական աշխատանքի համար:

Այդ բազան՝ Նաֆթարոյունաբերական «բանվորների Արհեստակցական Միությունն» էր, վորի քարտուղարությունն և կազմակերպման գործը էր վրա յեր վերցրել Ալյոշան (Ջապարիձե): Մոտավորապես այդ ժամանակ էլ սկսվում է քաղաքական մեծ կամպանիան, այսպես կոչված՝ «Նաֆթարոյունաբերական պրոլետարիատի լիազորների Խորհրդի» ընտրությունների շուրջը: Շահումյանը Խորհրդակցությունների առթիվ հրատարակել էր առանձին մի բրոշյուր («Դեպի Խորհրդակցություն բանվորական հինգ զարանտիականներով» վերնագրով), ուր պարզաբանված էր մեծամասնական ֆրակցիայի տեսակետը: Հետաքրքրական է այն, վոր Շահումյանը Խորհրդակցության նկատմամբ պաշտպանում

էր միևնույն տեսակետը, ինչ վոր արծարծվել էր Դոմալի ընտրությունների առթիվ մեծամասնականների կողմից: Նա շեշտում էր, վոր ընտրությունների հարցը չպիտի լուծվի արտույտ կերպով:—«Բանակցությունների գընալիս—ընտրում է նա Բագվա պրոլետարիատի տեսակետը, չի կարելի առանց այլևայլության ընդունել թըշնամու առաջարկած պայմանները, այլ պետք է լուրջ քննադատության յենթարկել նրանց և յեթե նրանք քննադատության յենթարկել նրանց և յեթե նրանք խարդախ պայմաններ են—չգնալ այդ Խորհրդակցության, բոլոր հայտարարել նրան: Իսկ յեթե կապիտալիստներն այնքան նեղն են ընկած, վոր ցանկանում են Խորհրդակցությունն ինչ գնով էլ լինի, բանվորությունը պիտի առաջարկի էր սեփական պայմանները և նրանց ընդունելու դեպքում, գնա Խորհրդակցության» (Եջ 7): Ապա Շահումյանը վորոշում է հինգ հիմնական այն գաղափարները, վորոնք ըստ Բագվա մեծամասնական կուսակցության հայեցակետի անհրաժեշտ էյին ընտրությունների աջողության համար: «Խորհրդակցության գլխավոր նպատակը պիտի լինի մի կողմից արհեստակցական Միությունների ամրացումը, իսկ մյուս կողմից էլ ընդհանուր կոլլեկտիվ պայմանագրի հաստատումը: Բոլորտը—բոլորտի համար, այսինքն սկզբունքային բոլորտը—աբսուրդ է, անհեթեթալիստ է, անարխիստական թեթևամտություն է: Ուրեմն հեռու սկզբունքային բոլորտից: Խորհրդակցությունը—Խորհրդակցության համար, այսինքն անպայման Խորհրդակցությունը ոպպորտյունիզմ է, բացարձակ ժխտումն է դասակարգային կոլի: Հեռու ոպպորտյունիզմից, շենգրեկովչինայից»...

Շահումյանի ակտիվ գործունեությունը անուշադիր չի թողնվում:

1909 թվականին նա ձերբակալվում է և բանտարկվում:

Սակայն այս անգամ շնորհիվ ծանոթների միջամտության նրան աջովում է ազատվել շատ շուտ: Դրան

հետևում է 1911 թվին Բագվա մեծամասնական կազմակերպության ղեկավար անդամների ձերբակալությունը, վորի հետևանքով բռնվում և բանտարկվում են Բագվա կազմակերպության բոլոր հայտնի գործիչները: Այդ ձերբակալությունները տեղի են ունենում այն ժողովից հետո, վոր կազմակերպվել էր բանվորական ինքնակրթական «Գիտություն» ընկերության մեջ: «Գիտություն» վարչության անդամներից էր այդ ժամանակ մեծամասնական հայտնի գործիչ Միրոն Չերնոմազովը, վորը հետագայում ավելի ևս հայտնի յե դառնում իր պրովակատորական գործունեության շնորհիվ:

Չերնոմազովը 1911-ին Ռ. Ս.-Դ. Բ. կուսակցության Բագվի կոմիտեյի անդամներից էր, իսկ հետագայում 1913-ին աշխատակցել է նաև Պետերբուրգի «Правда» որգանին: Պետք է յենթադրել, վոր Բագվի կազմակերպության մատնությունն էլ նրա գործն էր:

1910—11-ին Շահումյանը չէր սահմանափակվում միմիայն առորյա կուսակցական պրոպագանդիստական աշխատանքով: Նրա ձեռներեցությունը կազմակերպվում է 1911-ին նաև թեորիական մարքսիստական որգան «Սոր-Մոսքի» հրատարակության գործը: Շահումյանը խմբագրական կոլլեգիայի անդամներից էր այդ ժամանակ և միաժամանակ աշխատակցում էր ակտիվ կերպով ամսագրին:

1911-ի ձերբակալությունից հետո Շահումյանը աքսորվում է Բագվից: Փոխարքայի և ներքին գործերի նախարարության կարգադրությամբ նրան արգելվում է հինգ տարվա ընթացքում մտնել Կովկասի սահմանները:

Սակայն 1913-ին հրատարակվում է կայսերական մանիֆեստ, վորով ի միջի այլոց ազմինիստրատիվ արտոնականներին թույլատրվում է վերադառնալ Կովկաս: Այդ կարգադրությունը տարածվում է մեխանիկաբար և Շահումյանի վրա ու նա 1914-ին վերադառնում է հայրենիք: Բագու է մտնում Շահումյանը ճիշտ այն որերին,

յերը և՛ հասարակությունը և՛ ժողովրդական լայնագույն տարրերը տարված էյին ամենամեծ չափով ազգայնական հովերով: Հարկավոր էր մեծ տոկոսություն նացիոնալիստական ընդհանուր հորձանքին դիմագրավելու համար: Շահումյանը այս անգամ էլ նվիրվում է ամբողջովին բանվորական շարժման կազմակերպման գործին և իր ձեռքն է առնում Բագվա պրոլետարիատի ձեռնարկած ընդհանուր գործադուլի ղեկավարությունը: Դրան հետևվում է շատ շուտով նոր ձերբակալությունը: Նորից յերկար բանտարկությունից հետո 1916-ին նա աքսորվում է Ռուսաստան:

Վոստրիկանության դեպարտամենտի կողմից շեշտվում է առանձնապես այն, վոր Շահումյանը դեռ մարտին, 1916-ին Լենինի անունով ուղարկված իր նամակում պաշտպանել է «պարտության» կողմնակիցների տեսակետը:

Յերրորդ անգամ դառնում է Շահումյանը Բագու 1917-ին, Փետրվարյան հեղաշրջումից հետո:

Բագուն փոխվել էր: Ամեն տեղ տիրում էր վոգելություն և ուրախություն: Արտասովոր վոգելությունը եր ընդունվում և Շահումյանը: Թե ինչպես էր վերաբերվում նոր Բագուն նրան ամենից լավ ապացուցվում է դա մի հասարակ հանգամանքով: Դեռ Բագու չհասած, կես ճանապարհին նա տեղեկանում է, վոր Բագվա բանվորական պատգամավորների թորհուրդը միաձայն նախագահ է ընտրել իրեն: Յեվ այդ — չնայած նույնիսկ նրան, վոր 1917-ի Բագվա թորհրդում մեծամասնականների ֆրակցիան թորհրդի չնչին փոքրամասնությունն էր կազմում միայն: Ակներեվ էր արդեն այն, վոր Շահումյանի ընտրությունը կատարվել է Բագվա պրոլետարիատի պահանջի և ազդեցության ներքո: Համաձայնական կուսակցությունները (մենշևիկները, եսերները, դաշնակները), վորոնք կազմում էյին 1917-ին թորհրդի գերազանց մեծամասնությունը — հակառակ իրենց ցանկության տիպված էյին համաձայնվել պրոլետարիատի ցանկության

հետ: Յեւ կատարելով այդ ցանկությունը՝ նրանք մեծ հույսեր ունեյին, վոր համակերպման իրենց քաղաքակա-
նությամբ կարող կլինեն մեղմել հեղափոխության վերա-
բերյալ ստեղծված հոսանքների և տարածայնությունների
սուր անկյունները: Հետագայում, համոզվելով նրանում,
վոր դա անհնարին է, այդ միյեփուլյն համաձայնական
կուսակցությունները Շահումյանի փոխարեն նախագահ են
ընտրում եսեր Սաքո Սահակյանին: Սակայն հենց այդ
մոմենտից ել սկսվում է համաձայնականների խորհրդի
անկման շրջանը: Նոր ընտրություններին մեծամասնու-
թյունը ստանում են բոլշևիկները և ձախ-կսերները—և
դրա հետեւանքով Շահումյանը ընտրվում է Բագվա Բան-
վորական պատգամավորների խորհրդի նախագահ:

Չենք կանգնում այլևս Շահումյանի գործունեյության
այն շրջանի վրա, յերբ նա նշանակված էր խորհրդային
կառավարության կողմից՝ Ժողովրդական Կոմիսարների
խորհրդի Արտակարգ Լիազոր Անդրկովկասում: Հետագա-
յում, յերբ կազմվում է Կովկասյան խորհրդային առաջին
կառավարությունը և յերբ Շահումյանը ընտրվում է Բագվի
Ժողովրդական Կոմիսարների խորհրդի նախագահ—նա ա-
նում է խորհրդային քաղաքականության գործնական կի-
րառման առաջին փորձը Կովկասում, այն փորձը—վորը
կարմիր գծով լուսավառում է Կովկասյան պրոլետարիատի
հերոսական անցյալը: Թե՛ այդ և թե՛ նախորդ ետապները
ամենից լավ գծված և արտանկարված են Շահումյանի
հոգւածներում և ճառերում:

Փաստերի և դեպքերի խիստ սեղմ այն ուրվագիծը,
վոր բերեցինք մենք, դարձյալ բավական նյութ է տալիս
Շահումյանի կատարած գործի բնորոշման համար:

Միջազգայնական և մեծամասնական եր նա իր կյան-
քում և այդպես ել մնացել է նայել մեծ հոկտեմբերից
հետո—այն տասն որերից հետո, վորոնք Ամերիկյան կոմ-
մունիստ Զոն Ռիդի բնորոշումով «ցնցել են վողջ յերկ-
րագունդը»: Այդ տասն որերն ել անորինակ աղմուկ են

մտցրել Անդրկովկասյան իրականության մեջ: Նրանք հա-
վաքել են ի մի բանվորական հեղափոխությունից սար-
սափահար մանր բուրժուազիային և խմբել են մանր բուր-
ժուական մտավորականներին մենշևիկյան և ազգայնա-
կան իդեոլոգիայի շուրջը: Յեւ միաժամանակ համախմբել
են պրոլետարիատի շուրջը աշխատավորական լայն խավերը:

Պետք է ասել, վոր հեղափոխության առաջին որերին
մի փոքր իրարանցում նկատելի էր նայել Անդրկովկասյան
մեծամասնականների շարքերում: Բացատրվում է դա
նրանով, վոր Անդրկովկասյան միջավայրը յեղել է անհա-
մեմատ ավելի բարդ քան ուսականը: Այստեղ դասակար-
գային ներհակությունները հաճախ չափազանց սերտ
կերպով շաղկապվել և ձուլվել են ազգայնական, կրոնական
տրամադրությունների հետ: Յեւ անհրաժեշտ էր ունենալ
Շահումյանի տոկունությունը, յեռանդն և սառնասրտու-
թյունը՝ Կովկասյան բարդ իրականության բոլոր ներհա-
կությունները հաղթահարելու համար:

Շահումյանը կարողանում է այդ անել:

Նա կարողանում է բարձրացնել հոկտեմբերյան հե-
ղափոխության կարմիր դրոշը Անդրկովկասյան վայրերի
դարբանների մոտ: Նա կարողանում է հաստատել խոր-
հրդային Հանրապետության իշխանությունը ամեն կողմից
պաշարված, բոլոր վայրերից կտրված, և կատարելապես
մեկուսացած—Բագվա ըայնում:

Նա կարողանում է հավաքել մարտիկներ և անձնվեր
հեղափոխականների մի փոքր զույգ, ներշնչում է ույժ,
համոզում և վոգեորություն սովահար բագվեցի պրոլետա-
րիատին և կես տարուց ավելի պայքարում է միացյալ հա-
մակովկասյան հակահեղափոխության և իմպերիալիստական
տաճկական զորամասերի հորձանքի դեմ:

Բոլոր պաշտոններում ել, և՛ Անդրկովկասյան Արտա-
կարգ Կոմիսարի զիբքում, և՛ Կովկասյան Առաջին խոր-
հրդային Կառավարության Նախագահի պաշտոնում նա
միյեփուլյն եր—կովող և անհաշտ կոմանդարմը՝ Բագվա

պրոլետարիատի:

Միշտ և ամենուրեք, բանվորական կվարտալներում, կարմիր բանակայինների կազմաւոյում, ռազմական ֆրոնտի վրա—նա գտնվում եր պրոլետարիատի դասակարգային թշնամիների անընդհատ կրակի և գնդակների տարափի տակ:

Յեւ այդպես ել ավարտում ե նա իր կյանքը՝ ընկնելով իմպերիալիզմի վարձկանների դավաճանական հարվածից, ընկնելով—վորպես Բագվա պրոլետարիատի և առաջին Բագվա Կոմունայի ղեկավարը և պարագլուխը:

Ստեփան Շահումյանի գրական գործերը լայն շրջաններին այնքան ել հայտնի չեն:

Բացատրվում ե դա մասամբ այն հանգամանքով, վոր հեղափոխութունից առաջ և մինչև պատերազմ նա հաճախ ստորագրում եր իր հոդվածները մականուններով: Նրա ամենամեծ գործը—«Ազգային-Կուլտուրական ավտոնոմիայի մասին» բրոշյուրը լույս ե տեսել 1914-ին և կրում ե «Այաքս» մականունը: Նրա հոդվածների և ակնարկների մեծագույն մասը ստորագրված ե կամ «Ս.» տառով, կամ ել ավելի ևս հաճախ «Ս. Շ.», կամ «Ս. Շ.—յան»:

Կան նաև հոդվածներ ու առաջնորդողներ առանց վորեւս ստորագրության:

Բոլոր այդ նկատողություններն ու հոդվածները ցրված են հին հանդեսներում և թերթերում, վորոնցից շատերը կորել են միանգամայն: Այնուամենայնիւ, ուշադիր ընթերցողի համար դժվար չե վորոշել իսկական հեղինակին, այնքան բնորոշ ե Շահումյանի գրելու ձևն և վոճը: Շահումյանը յերբեք չե ցրվում և յերբեք չե Կեռնուում անմիջական նյութից: Գրում եր նա չափազանց պարզ, պարակախոսական գիծը գերակշռում եր նրա բոլոր գոր-

ծերում: Ակտիվ և հեղափոխական մարքսիզմի գաղափարը գծված եր վորոշակի նույնիսկ ամենահասարակ մատենագրական հոդվածի մեջ: Այդ ուղղությամբ Շահումյանը գործել ե, ինչպես շեշտեցինք վերը, դեռ ուսանողական տարիներին՝ 1903—1904 թվականներին: Նրա աշխատություններից մեկը—«Ազգային խնդիրը յեւ Սոցիալ-դեմոկրատիան» պատրաստվել ե այդ տարիներին: Միևնույն ժամանակ գրվել ե նաև Շահումյանի հայտնի բեֆերատը—«Տարտիքական տարածայնությունների մասին»: Այդ բեֆերատը հայտնի յեր ուսանողական ամենալայն շրջաններին և չափազանց հատկանշական եր Շահումյանի հասարակական հայացքների բնորոշման համար: Դժբախտաբար, այդ գեկուցման մասին մեզ հասած տեղեկությունները չափազանց թերի յեն և անվորոշ:

Բեֆերատի հիմնական առանցքը, Շահումյանի ժամանակակիցների վկայությամբ, կազմում եր ակտիվ մարքսիզմի գաղափարը: «Բանվոր դասակարգը, ասում եր Շահումյանը, չալիտի սողա պատմության հետևից, այլ ինքն ել պիտի ազդե պատմական զարգացման ընթացքի վրա. ծիծաղելի յեն նրանք, վորոնք ամբողջ իրենց հույսերը կապում են պարլամենտական մեծամասնության կազմակերպության հետ և ապավինում են խաղաղ բեֆորմներին: Այն մոմենտին, յերբ այդ մեծամասնությունը կը կազմվի, իշխող բուրժուազիան դեն կնետի իր բեալական շահերին այլևս չբավարարող պարլամենտարիզմը: Դրա համար ել բանվոր դասակարգի կուսակցությունը պարտավոր ե նախագուշակել դեպքերն յեւ ոգտագործել կովի բուրդը մեթոդները: Յեթե նույնիսկ տվյալ յերկրի տնտեսական հարաբերությունները հասունացել չեն սոցիալիստական հեղափոխության համար—այնուամենայնիւ մենք պատրաստ պիտի լինենք վորոշ մոմենտին մեր ձեռքը վերցնել ապրտամբության, ընդհանուր գործադուլների յեւ այլ միջոցներով իշխանությունը յեւ արագաբար վերակազմել հասարակությունը»:

Այդ կտորը բերում է անգիր վերը հիշված Մանու-
չարյանը իր հիշողությունների մեջ:

Ինչպես տեսնում ենք մեծամասնական աշխարհայե-
ցողությունը հատուկ հեղափոխական ակտիվությունը գծված
է այդտեղ ավելի քան վորոշ:

Պետք է ասել, վոր միևնույն այդ գիծը բավական
վորոշակի շեշտել է նաև Շահումյանը գրական-քննադա-
տական իր հոդվածներում: Այդպես է որինակ նրա քննա-
կան հոդվածը 1914-ին հրատարակված «Հայ գրականու-
թյան այն ժողովածուի» մասին, վոր լույս է տեսել
ռուսերեն լեզվով Մաքսիմ Գորկու խմբագրությունում: Շա-
հումյանը թեմային մոտենում է բացառապես վորպես
հրապարակախոս և քաղաքագետ: Կանգնելով ժողովածուի
բովանդակության վրա՝ նա իր գլխավոր ուշադրությունը
դարձնում է հայ նացիոնալիզմի քննադատության վրա:
Մեծ հմտությամբ և տրամաբանական պարզությամբ մեր-
կացնում է նա ժողովածուի առաջին ներածական մասում
առաջադրած յուրորինակ նացիոնալիզմի նշույնները և հա-
կադրում դրան հետևողական մարքսիստական լուսաբա-
նությունը:

Բավական նշանակալից են այդ կողմից նաև Շահում-
յանի յերկու նախնական հոդվածները: Առաջին հոդվածը
նվիրված է սոցիալական հեղափոխության գաղափարի
հիմնավորման և իր ժամանակ լույս է տեսել մեր կու-
սակցության Կովկասյան Միության որդանի եջերում
(«Եվոլյուցիոնիզմ և ըվոլյուցիոնիզմ հասարակական գի-
տություն մեջ»): Այդ հոդվածը ուղղված է լիբերալիզմի
և սոցիալ-լեֆորմատորների դեմ և մատչելի լեզվով պար-
զաբանում է այն միտքը, վոր հեղափոխությունը ինքը
հասարակության եվոլյուցիոնական զարգացման բնա-
նի թերի կողմեր: Սակայն ընդհանուր առմամբ իր հիմ-
նական միտքը Շահումյանը արծարծել է բավական սուր
կերպով:

«Ժամանակակից սոցիոլոգիական եվոլյուցիոնիզմը,
ասում է նա այդտեղ, վոչ միայն չի բացասում հեղա-
փոխությունների որինականությունը, հանկարծակի ու
բռնի հեղաշրջումները, այլ, ընդհակառակը, պատմությա-
ն զարգացման պրոցեսում դրանց համարում է եվոլյուցի-
այի հիմնական մոմենտը»: Կանգնելով բնագիտությունից
առնված մի յերևույթի վերլուծության վրա՝ հեղինակը
ոգտվում է առիթից սոցիալ-պատմական իր թեզի հիմ-
նավորման համար:

Ավելի ևս վորոշակի յե գծվում հրապարակախոս Շա-
հումյանի հատկությունը նրա մնացյալ գործերում: Նա
գրել է յերկու բրոշյուր ազգային հարցի մասին: Առաջինը
լույս է տեսել 1906-ին «Ազգային խնդիրը յեվ սոցիալ
դեմոկրատիան» վերնագրով, իսկ յերկրորդը ուղղված է
«Ազգային կուլտուրական ավտոնոմիայի» պաշտպանների
դեմ:

Առաջին բրոշյուրի մեջ Շահումյանը մատչելի կեր-
պով արծարծում է և հիմնավորում ռուսական սոցիալ
դեմոկրատիայի հայեցակետը ազգային հարցի մասին: Այդ
բրոշյուրը ուղղված է անմիջապես Կովկասյան նացիոնա-
լիստների դեմ: Պետք է ասել, վոր 1904—1906 թվական-
ներին հայ բուրժուական ազգայնականների կազմակեր-
պությունը՝ «Դաշնակցությունը» և վրացական սոցիալիստ-
ֆեդերալիստների կուսակցությունը իրենց բոլոր տեսա-
կան հայացքները ձևակերպում էին միևնույն կերպ և
գիմում էին միանման փաստաբանության:

Կովկասյան նացիոնալիստների համար ազգային-քա-
ղաքական ֆեդերացիան՝ այդ ժամանակ ծրագրային ամե-
նահիմնական պահանջն էր: Յեվ նույնն էր նաև Ռուսա-
կան նեո-նարոդիկներին՝ սոցիալիստ-հեղափոխականների
տեսակետը: Սակայն սոցիալիստ-հեղափոխականները Ան-
դրկովկասում գործում էին առանց վորևեք բեալական
հենարանի: Անհամեմատ ավելի ուժեղ էին ազգայնա-
կան կուսակցությունները, վորոնք համակերպվելով հե-

տամնաց մասսաներին՝ ստեղծել էյին ազգային սոցիալիստական իդեոլոգիայի բավական սրամիտ տեսություն: Յեվ անա քաղաքական ֆեդերացիայի գաղափարը հանդիսանում էր հենց այդ տեսության հետ կապված նացիոնալիստական ագիտացիայի և պրոպագանդայի գենքերից մեկը: Գուցե հենց դրա համար կադետներն ևս միացել էյին նացիոնալիստական ընդհանուր բանակին և պաշտպանում էյին ազգային քաղաքական ֆեդերացիայի գաղափարը:

Իր բրոշյուրի մեջ Շահումյանը կանգ է առնում մանրամասն նացիոնալիստների հիմնական առարկությունների վրա և քննադատելով տերրիտորիալ ֆեդերացիայի գաղափարը շեշտում է, վոր ազգային ֆեդերացիան, ըստ եյություն մի ծրագրեր—*maximum* է բոլոր նացիոնալիստական կուսակցությունների համար¹⁾:

Շահումյանը հակադրում է տերրիտորյալ ֆեդերացիայի պահանջին Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական բանվորական կուսակցության ծրագրային յերեք կարևոր կետերը (7-դ, 8-դ և 9-դ) և ապա ավելի մանրամասն բացատրում «ազգային ինքնորոշման իրավունքի» պահանջը՝

«Կենտրոնացման և ֆեդերալիզմի հարցերը, կարդում ենք հիշված գրքում, աբսոլյուտ սկզբունքներ չեն, այլ քաղաքական նպատակահարմարություն կամ թե պատմական տեսնիկայի խնդիրներ: Յեթե յերբևիցե պրոետարիատի շահերի տեսակետը պահանջե, վոր մենք առաջադրենք ինքնավարության կամ ֆեդերացիայի պահանջը—մենք այդ կպահանջենք²⁾»:

Իր աշխատության վերջին մասում Շահումյանը ավելացնում է, վոր ընթացիկ մոմենտի շահերի տեսակետից

¹⁾ Ս. Մ. Շահումյան «Ազգային խնդիր և Սոցիալ-Դեմոկրատիա»: Թիֆլիս, 1906 թ., էջ 42):

²⁾ «Ազգային խնդիր և Սոցիալ-Դեմոկրատիա», էջ 54—55

պահանջվում է հեղափոխական բոլոր ույթերի համախմբում բում ցարական միապետության դեմ: «Բոլոր ազգային հակասություններն և պրոբլեմներն, առում է նա, պետք է մի կողմ նետվեն: Պրոետարիատի անմիջական շահը կայանում է նրանում, վոր նրա շարքերում իշխե կատարյալ միջազգային համերաշխություն»:

Այդպիսով այստեղ ևս Շահումյանը վերջացնում է իր բրոշյուրը նրանով, վոր ներքող է ձևում քաղաքական-հեղափոխական արշավին ընդդեմ ցարիզմի: Սկզբից մինչև վերջ ամբողջ բրոշյուրի մեջ շեշտվում է կարմիր այդ գիծը:

Շահումյանի այդ բրոշյուրը, չնայած իր փոքր ծավալին, 1906-ին ներկայացնում էր նորություն: Մարքսիզմը կովկասահայ իրականության մեջ տակավին թույլ մի հոսանք էր: Յեվ այդպիսի միջավայրում ազգային հարցի մարքսիստական վերլուծությունը հակայական մի խթան էր յերիտասարդության և մասսաների քաղաքական արթնացման համար: Ներկայումս այդ գրքույկը ներկայացնում է իրենից, իհարկե, ավելի պատմական մի դոկումենտ, քան ուսումնասիրություն:

Միյենույն կովկասյան նացիոնալիզմի դեմ են ուղղված նաև Շահումյանի ուրիշ բազմաթիվ հոդվածներն և գրությունները՝ 1906—1910 թ. ընթացքում նա ամենից շատ կանգնել է հայ նացիոնալիստական ամենահզոր կադմակերպության—Դաշնակցության քննադատության վրա: Այդ հոդվածների մեջ ուշագրավ է Դաշնակցության հասարակական եյության բնորոշմանը նվիրված նրա այն տեսությունը, վոր դեռ 1906-ին լույս է տեսել մեր կուսակցական լեզու որգաններից մեկի եջերում: Հոդվածը, ինչպես շեշտել ենք քիչ առաջ, չի կորցրել իր արժեքը մեր որերի համար ևս:

Մի ուրիշ հոդվածում նա կանգնել է Դաշնակցության տեսական իմաստասիրության պաշտպաններից մեկի հայտնի Միքայել Վարանդյանի վրա: Հոդվածը կոչվում է

«Տիյեզերական թուլթալը» և տպված է Բագվում հրատարակվող «Նոր յոսը» մարքսիստական հանդեսում: Հոգվածի մեջ դրված է Միքայել Վարանդյան - Հովհաննիսյանի գատարկահնչուն տեսաբանություն կտրուկ քննադատությունը: Դժբախտաբար «Նոր Սոսը» վոստիկանություն կարգադրություն ընդհատվել է, և հոգվածը մնացել է այդ պատճառով անավարտ:

Միյենույն հանդեսի մեջ գետեղված է նաև Շահումյանի մատենագրական նկատողությունը ստատիստիկ Պետրովիչի մեկ գրքի մասին: Պետրովիչը նարոդնիկ էր, և ռուսական սոցիալիստ-հեղափոխականներին բավական մոտ կանգնած մի անձնավորություն: Յեվ ահա հենց դրա համար էլ նրա գիրքը բնորոշ էր կովկասյան բոլոր հակամարքսիստական հոսանքների համար: Կարճ խոսքով նարոդնիկ Պետրովիչը, ասում էր այն, ինչ վոր մտածում և պաշտպանում էին զաշնակցականներն և վրացական սոցիալիստ - ֆեդերալիստները: Պետրովիչը, քննելով Բագվա նավթարդյունաբերական պրոլետարիատի իրական բնույթը և նրա սերտ կապակցությունը գյուղական միջավայրի հետ, աշխատում էր ամեն կերպ ապացուցել, վոր այդ պրոլետարիատը գյուղական է իր վողջ եյուլթյամբ և ներկայացնում է իրենից «աշխատավոր ժողովրդի» մի գանգված: Շահումյանը կանգնում է ահա հենց այդ թեզի քննության վրա և կտրուկ խոսքերով ցուցադրում է Պետրովիչի փաստաբանության մակյեբեսային բնույթը: «Ի միջի այլոց, նկատում է Շահումյանը իր հոգվածում, մեր հեղինակը բերում է վիճակագրական տեղեկություններ Մոսկվայի բանվորության մասին, վորոնցից ինքը պրոլետարների խոշոր կոնսիդենտ: Դուրս է գալիս, վոր «Կապիտալ» - ի թեորիան մայրաքաղաքում ճշտվում է, բայց Բագվում վոչ. պ. Պետրովիչը չի կարողանում հասկանալ մի պարզ յերեվույթ. Մոսկվայում կապիտալիզմը ավելի հին է և ավելի զարգացած, իսկ Բագվում, ուր

կապիտալիզմը ավելի ուշ է մտել, նա ներկայանում է ավելի անզորացած ձեվով: Այդ շարժման կամ զարգացման տարրական հասկացողությունը մնացել է անըմբռնելի պ. Պետրովիչի համար»: Նույնքան հետաքրքրական է «Նոր-յոսը» գետեղված «Իրականություն յեվ հեռանկարներ» հոգվածը: Քաղաքական բեյակցիան 1910—11-ին տակավին շատ և շատ ուժեղ էր: Մեծ էր նաև այդ ժամանակ լքումը սոցիալ-դեմոկրատական շարքերում: Շատ շատերին թվում էր թե «անլեգալ» բանվորական շարժումը և գոսակարգային շարժման հեղափոխական մեթոդներն այլևս ավելորդ և ապարդյուն են: «Անլեգալ» բանվորական կուսակցության և հեղափոխական շարժմանը հակադրվում էր այդ որերին լեգալ բանվորական լայն կուսակցությունը և լեգալ բանվորական շարժումը տվյալ պետությունում: «Լիկվիդատորություն» էր կոչվում այդ շարժումը—վորովհետև փաստորեն նա «լիկվիդացիայի» և կատարյալ վոչնչացման էր յենթարկում քանվորական կազմակերպությունը—վորպես այդպիսին:

Յեվ ահա հենց այդ շրջանում Շահումյանը քաղաքական հոռետեսության և «լեգալիզմին» հակադրում է մեծամասնական հոսանքի աշխարհայեցողությունը: Չփստելով լեգալ «հնարավորությունների» ոգտագործման անհրաժեշտությունը, նա բնորոշում է մոմենտի հակասական յերեվույթները և մի փոքր «յեզոպոսյան» լեզվով հիմնավորում է հեղափոխության անխուսափելիությունը: «Լեգալ» հիմնարկությունները վոչ թե ինքնանկախ նպատակներ են, այլ միջոցներ՝ «կազմակերպական» և «կրթական» կենտրոններ՝ ավելի հետամնաց տարրերի հեղափոխականացման համար: «Այդ ճանապարհով, ասում է Շահումյանը, նեղ ու փշոտ՝ սովոր ծանր ու համառ աշխատանքի, նա դիմում է դեպի իր նվիրական նպատակները»:

Միյենույն այդ առույգ համոզումով տոգորված է նրա ուրիշ աշխատությունն էլ—նրա հայտնի բրոշյուրը ազգային կուլտուրական ավտոնոմիայի մասին:

1914-ին հայկական մենշեվիկների տեսաբան Դ. Անանունը դաշնակցականների տեսական որդանի «Նոր-Հոսանքի» եջերում գետեղել եր բավական ստվար մի հոգված, ուր նա քննադատելով սոցիալ-դեմոկրատական տեսակետը «ազգային հարցի» մասին արծարծում և պաշտպանում եր ավստրիական դպրոցի ուսմունքը — Բուդոլֆ Շպրինգերի հայտնի թեյորիան «ազգային կուլտուրական ավտոնոմիայի» մասին: Պետք ե ասել, վոր Դ. Անանունից առաջ այդ միենույն ուսմունքի պաշտպանությունը իր վրա յեր առել վրացական մենշեվիզմի պարագլուխ Ժորդանի իր «Հինը և նորը» ժողովածուի մեջ: Դ. Անանունը փաստորեն կրկնում եր միմիայն Ժորդանիայի ասածներն, այն տարբերությամբ միայն, վոր Շպրինգերի ընդհանուր տեսակետի պարզաբանման հետ միասին հայ մենշեվիզմի տեսաբանը տալիս եր նաև իր սեփական դիտողությունները կովկասյան իրականության պայմաններին մասին: Դ. Անանունի հոգվածը գետեղված եր, ինչպես ասացինք, դաշնակցականների թեորիական ամսագրի եջերում: Արդեն դրանով նա դառնում եր հայ նացիոնալիստների համար մարքսիզմի և բանվորական շարժման դեմ ուղղված մի գեներ, հարմարագույն մի առիթ՝ թիկունքից զարնելու պրոլետարական կազմակերպությանը:

Դրան պիտի ավելացնել նաև այն, վոր մոտավորախոսներից մի քանիսը իրենք ել դուրս են գալիս, վորպես «ազգային կուլտուրական» ավտոնոմիայի պաշտպաններ: Հասարակ այդ հանգամանքը առանձին գունավորում եր տալիս Դ. Անանունի բրոշյուրին: «Սոցիալ Դեմոկրատ» Մանունների յերևույթը դառնում եր արդեն բավական վորոշ քաղաքական յերեվույթ:

Այդ հանգամանքը շատ լավ եյին տեսնում և մեր հակառակորդները: Նրանք հասկանում եյին գուցե ավելի լավ, քան ինքը Դ. Անանունը, վոր «ազգային կուլտուրական ավտոնոմիան» նացիոնալիզմի նորածն մի արտահայտ-

տություն ե — չափազանց պարզ և վորոշ համակերպման մի փորձ՝ հայ բուրժուազիայի շահերին և իդիոկրիային: Դրանով ել բացատրվում ե արտասովոր այն վոգեկորությունը և ուրախությունը, վորով ընդունվում ե Դ. Անանունի բրոշյուրը հայ դաշնակցական շրջաններում:

Այդպիսի պայմաններում ազգային կուլտուրական ավտոնոմիայի հարցը ստանում եր վոշ միայն թեորիական, այլ նաև քաղաքական նշանակություն: Ներկայումս, Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո գուցե և մի քիչ տարրինակ և նույնիսկ վիճելի յերևացին Շահումյանի մի քանի արգումենտները: Որոհողային Հանրապետության վորձը և աշխատանքը ազգային լանդրի լուծման և կիրառման նկատմամբ այնքան մեծ ե, վոր ինքնըստինքյան ավելորդ ե թվում այն փաստաբանությունը, վոր տալիս ե Շահումյանը իր բրոշյուրի մեջ: Բայց այդ այդպես ե այժմ — 1925-ին: Իսկ 10 տարի առաջ, 1914-ին, իմպերիալիստական մեծ պատերազմի նախորդակին և ազգայնական հոսանքների ամենազոր իշխանության որերին, բորո այն հարցերն, վոր գուշակում եր Շահումյանը, ավելի քան հրատապ և այժմեական եյին: «Մեզ մոտ, նկատում եր իր գրքի առաջաբանում Շահումյանը, չկա մի կուսակցություն, ինի դա կդերական կամ բուրժուական, «հետադիմական» կամ «առաջադեմ», վոր պաշտպան չըհանդիսանա ազգային կուլտուրական ավտոնոմիայի պահանջին: Հայ քահանաների որդան «Հովիվը» հայ վաճառականների թերթ «Մշակը», հայկական մանր բուրժուական ինտիլիգենցիայի թերթ «Հորիզոնը» — բոլորն ել այդ ավտոնոմիայի հետ են կապում հայ ժողովրդի փրկությունը: Անանունի հոգվածը անհաջող մի փորձ ե մարքսիստական տեսակետից հիմնավորել ազգային կուլտուրական ավտոնոմիայի պահանջը: Մեր որերում ինչ բան միայն չեն փորձում արդարացնել մարքսիզմով, և ով միայն չի հայտարարում իրեն մարքսիստ:

Ազգային կուլտուրական ավտոնոմիայի քննադատու-

թյան հետ միաժամանակ Շահումյանը կանգնում է նաև Դավիթ Անանունի կողմից առաջադրված կոնկրետ առարկությունների վրա և տալիս է նրա նացիոնալիստական փաստաբանությունից բավական ճիշտ բնորոշումը: Այդ տեսակետից, պետք է ասել, «Այաքսի» բրոշյուրը չի կորցրել իր արժեքը այսօր ևս մանավանդ այն պատճառով, վոր նրա քննադատությունը ուղեկոչում է Մանանունը հայ նացիոնալիզմի տիպիկ ներկայացուցիչներից մեկին է: Հետագայում, յեղնելով նացիոնալիստական այն կետերից, վոր շեշտել են Ն. Ժորգանիան և Մանանունը, — կովկասյան նացիոնալիստները հիմնավորել են իրենց ուրույն այն աշխարհայեցողությունը, վորն այժմ ել հայ դաշնակիցների և վրացական մենշևիկների համար հասարակական քաղաքական «հավատամքի» ամենահիմնական ֆունդամենտն է:

Բավական վորոշ պարզվում է այդ Հոկտեմբերյան հեղափոխության օրերին, յերբ մենշևիզմի ալանավոր ներկայացուցիչները խոստովանում և ասում են լրիվ կերպով այն բոլորը, ինչ վոր առաջ ծածկում էին: Հետագորքրական է այն, վոր մինչև 1909-ը վրացական մենշևիկներն վոչ մի կերպ չէին ցանկանում համաձայնել դաշնակցության նացիոնալիստական հավատամքի հետ, իսկ իմպերիալիստական պատերազմի ժամանակ ընդհակառակ, այդ միևնույն մենշևիկները դառնում են շատ խորամանկ և հետևողական նացիոնալիստներ: Այդ օրերից արդեն կովկասյան մենշևիզմը դառնում է կազմակերպական գործոն համայն կովկասյան նացիոնալիզմի համար: Յեվ մենք տեսնում ենք, ինչպես 1916—1917-ին մենշևիկները դառնում են իրենց նախկին թշնամիները — հայ դաշնակցականների զինակիցներ և դուրս են գալիս նրանց հետ միասին մեծամասնականների դեմ:

Շահումյանի հուլիսյանը մեր կուսակցության թիֆլիսի օրգան «կովկասյան բանվորի» մեջ նվիրված են ալանարկած յերևույթի քննության և գնահատությանը: Այդ հոդվածներում Շահումյանը արձանագրում է նախ և ա-

ռաջ մենշևիզմի կատարած եվոլյուցիան և ապա հանգամանորեն պարզում է կովկասյան նացիոնալիզմի հակահեղափոխական դերը:

«Ռուսական հեղափոխությունը յեվ Անդրկովկասյան Ռուսաստանում» հոդվածի մեջ նա ի միջի այլոց շեշտում է, վոր հնայած իր ձևական բնույթ կրող կապին իր եյուլթյամբ միջազգայնական սոցիալ-դեմոկրատիայի հետ — իրականության մեջ վրացական սոցիալ-դեմոկրատիան հանդիսացել և հանդիսանում է Վրաստանի մանր-բուրժուական դեմոկրատիայի կազմակերպությունը:

«Վրացական մենշևիկները, կարդում ենք մենք, վերոհիշյալ հոդվածում, հենվել են Վրաստանում վոչ թե պրոլետարիատի, այլ գյուղական և քաղաքային մանր բուրժուազիայի վրա և դրա համար ել նրանք յեղել են մանր բուրժուական ազգային կազմակերպություն: Ներկայումս նրանք մերկացրել են բացօթյա կերպով իրենց դասակարգային բնույթը և ցուցադրել են, վոր մենշևիզմը դա «վրացական դաշնակցությունն է» ճիշտ այնպես, վորպես «Մուսաֆատը» — մուսուլման «դաշնակցությունն է»: Յեթե մենք քննադատում ենք մենշևիկներին, անում ենք այդ վոչ թե նրա համար, վոր նրանք ոգտվում են մեր կողմից հայտարարված «ինքնորոշման իրավունքով» — այլ այն պատճառով, վոր նրանք անվանում են իրենց սոցիալիստական կուսակցություն և միաժամանակ ինքնորոշվում են, վորպես մանր բուրժուական նացիոնալիստական կուսակցություն: Մենշևիկների տարբերությունը նացիոնալիստական ուրիշ կուսակցություններից հենց նրանումն էր, վոր մենշևիզմի դեկավարները իրենց ծրագրային բոլոր պահանջները հիմնավորում էին մարքսիստական ֆրագեոլոգիայի միջոցով: Ահա ինչու 1917—18 թվին քաղաքական պայքարը կովկասյան նացիոնալիզմի դեմ ամենասերտ կերպով շարկապվում է հակամենշևիկյան պայքարի հետ: Նա, ով կամենում եր հարվածել ազգայնականներին, անհրաժեշտաբար պետք է

կովեր նաև այդ նույն նացիոնալիստների ավելի խելոք և հետևողական տեսաբաններին՝ մենչևիկներին դեմ: Մեր կուսակցության դիրքը այդ ժամանակ պետք է ասել, վոր այնքան ել կտրական չեր: Շնորհիվ ազգային հարաբերություններին խտացման և սրմանը քաղաքական միջավայրը Անդրկովկասում չափազանց ծանր եր: Ամեն բոլոր կարող եր բռնկվել նացիոնալիստական տարերքը—այնքան տենդոտ եր շրջապատը: Յեվ նացիոնալիստական այդ տարերքի ու նացիոնալիստական պատերազմների դեմ կովելու համար միակ յեղքը խաղաղության և Բանվորա-Գյուղացիական դիկտատուրայի հաստատումն եր: Իսկ բուրժուազիայի և հողատեր ազնվականության տիրակալության տնտեսական արմատների վոչնչացման համար անհրաժեշտ եր ձեռնարկել պամեշչիկական կալվածատիրության եքսպրոպրիացիան և արդյունաբերության նացիոնալիզացիան: Յերկու այդ միջոցներն ել անմիջապես պիտի հարվածեյին կապիտալիստներին և կալվածատերերին և զրանով արդեն նպաստավոր միջավայր ստեղծեյին աշխատավոր տարրերի յեղբայրական համագործակցության համար: Շահումյանի հողվածներում և ճառերում թե այդ և թե մեծամասնական կուսակցության Անդրկովկասյան կազմակերպության առաջադրած մնացյալ կետերը զծված են ավելի քան վորոշ: Այդ կողմից նրա ճառերն և հողվածները անգնահատելի նյութ են մատկարարում մեր կուսակցության պատմության համար:

Առանձնապես հետաքրքրական են նրա դիտողությունները ագրարային հարցի և կովկասյան գյուղացիության շարժումների մասին: Պետք է ասել, վոր Շահումյանը միշտ շեշտել ե, վոր գյուղացիական շարժման ամենախոշոր վայրերը պիտի լինեն մուսուլման նահանգները: Այդ խնդրին նվիրել ե նա մի քանի հողվածներ, վորոնց մեջ կարևոր արժեք ե ներկայացնում ի միջի այլոց այն հողվածը, ուր նա պատմում ե «Անդրկովկասյան Ագրարային շարժման յեվ գյուղացիական հեղափոխության մասին»: Այդ

հողվածներում հեղինակը իրեն հատուկ պարզությամբ բնորոշում ե անդրկովկասյան հակահեղափոխության դասակարգային եյուլթյունը մի կողմից և ապա Բանվորա-Գյուղացիական հեղափոխության արժեքը անդրկովկասյան աշխատավորության համար, մյուս կողմից:

«Ռուս բանվորներն ու գյուղացիները, կարդում ենք հիշյալ հողվածներից մեկում, չհանդուրժեցին կապիտալիստների և կալվածատերերի լուծը և Հոկտեմբեր ամսին հեղափոխության առաջացրին ու ստեղծեցին նոր Բանվորա-Գյուղացիական կառավարություն բուլշևիկների կուսակցության ղեկավարությամբ:

Ձեր խաներն և Ձեր լրագրչակները խաբել են Ձեզ, թե բուլշևիկները մուսուլմանների թշնամիներն են: Ընդհակառակը, բուլշևիկներն ամենամեղք լարեկամներն են թե մուսուլման և թե ուրիշ գյուղացիների: Նրանք արդեն վոչնչացրել են Ռուսիայում կալվածատերերի իշխանությունը և ցանկանում են ոգնել բոլոր ժողովուրդներին և բոլոր գյուղացիներին ազատագրվել իրենց դարեվոր բռնակալներից»: Գյուղացիական ապստամբությունների հոսանքը առանձնապես հզորավոր եր 1917—1918 թ. դեկտեմբերին և հունվարին վաղեմի Գանձակի նահանգի մուսուլման գավառներում: Այդտեղ խան—ազնվականների և կալվածատերերի բռնակալական լուծը զգացվում եր անհամեմատ ավելի սուր, քան վորևե ուրիշ տեղ: Դրա համար ել ագրարային շարժումը բռնկվել եր առաջին հերթին մուսուլման նահանգներում: Բռնկվելով, նա, շնորհիվ գյուղացիական մասսաների անգլիտակցության և անկազմակերպության, ընդունել եր տարերային ապստամբության բնույթ:

Դա յուրորինակ արևելյան «Ժակերիա»-ի նման լայնածավալ և մերկալից մի շարժում եր: Գյուղացիությունն այդ ժամանակ քանդում և հարվածում եր ամեն ինչ. ամենավայրենի կերպով կոտորում եր նա իր դարեվոր բռնակալներին, այրում եր նրանց ապարանքները, վոչնչացնում եր բեգական վոլջ ունեցվածքը:

Անշուշտ տարերային այդ անարխիայի առաջն առնելու համար ել Շահումյանը համոզում եր գյուղացիներին կազմակերպված բնույթ տալ իրենց բողոքին: «Դուք չըպետք ե սպանեք Ձեր խաներին յեվ բեկերին, նրանց կանանց յեվ զավակներին: Պետք չե այրել յեվ վռնչացնել նրանց ունեցվածքը:

(Այդ առիթով Շահումյանը իր կողի մեջ ընդգծել ե): Յերբ դուք կխլեք նրանցից հողն ու հարստությունը, խաներն ու բեգերն այլևս Ձեզ համար սարսափելի չեն լինի և նրանց հողերն, ունեցվածքը և տները թող մնան անավեր և Ձեզ համար: Յեվ այն, ինչ վոր դուք խլում եք—կալվածատերերից, պետք ե պատկանի համայն գյուղացիությանը, այլ վոչ թե առանձին անհատներին, վորոնք կարող են դառնալ նոր բեգեր Ձեզ համար: Աշխատեք, վոր Ձեր ապստաբուծությունը լինի ընդհանուր, վորպեսզի ամենուրեք մոսուլման—գյուղացիները խլեն կազմակերպված կերպով բեգերի հողերը: Ստեղծեք գյուղացիական կոմիտեներ, վորոնք պետք ե գրավեն այդ կալվածքները»:

Մենք դիտավորությունամբ են բերում ամբողջությամբ այդ պարբերությունը, վորովհետև նա ավելի քան լավ բնորոշում ե թե Շահումյանի գրելու առանձին ձևը և թե նրա մտեցումը մոսուլման գյուղացիության: Այստեղ ել, ինչպես բոլոր մյուս հոգվածներում և թուլցիկներում, նա գծվում ե—վորպես քաղաքական գործիչ ամենից առաջ, վորպես ժողովրդական տրիբուն, վորի համար գրական գործն ևս ագիտացիոն զենք եր և հեղափոխական պայքարի սուր:

Այդպես ե հրապարակախոս—Շահումյանը:

Նա ծանոթ եր վոչ միայն առորյա քաղաքական, այլ նաև ընդհանուր սոցիոլոգիական և փիլիսոփայական գրականության հետ: Նա միշտ ժամանակ եր գտնում կարգալու և քննելու գրական բոլոր նորությունները փիլիսոփայության և տնտեսագիտության բնագավառից: Յեվ միաժամանակ աշխատակցում և գրում եր գրեթե բոլոր մե-

ծամասնական որգաններում: Իր ժամանակ գրել ե նա սոցիալ-դեմոկրատական «Կայծ» (1906) և «Նոր-Խոսք» (1906) որաթերթերում, ուսերեն «Կովկասյան բանվորական թերթ»-ում (1906), «Հնչակ»-ում (1908), «Բագվա Պրոլետար» և «Բագվա Բանվոր»-ում (1908), «Նոր-Խոսք» (1910) հանդեսում, «Պայքար» (1916) և «Սոցիալ-Դեմոկրատ» (1917) թերթերում, «Կովկասյան Բանվորում» (1917) և մեծամասնական կազմակերպության Բագվա Կոմիտեյի որգան «Բագվա Բանվոր» (1917—1918)-ում: Շահումյանի թարգմանական աշխատանքներից հայտնի են Կարլ Կաուցկու «Գաղութային Քաղաքականությունը» և Կարլ Մարքսի «Վարձու աշխատանքը և Կապիտալը»:

Բացի այդ գրական գործերից Շահումյանը սկսել եր նաև մի քանի ուրիշ աշխատանքներ: Դրանց մեջ մեր տեղեկությունների համաձայն շատ կարևոր եր «Նոր Խոսք» հանդեսի համար պատրաստած «Նացիոնալիզմը հայ գրականությունում» ստվար հոդվածը: Այդտեղ Շահումյանը վերլուծել եր հայ գրականության տրագիկոն պատմաբանների, Լեոնի, Լեվոն Մանվելյանի, Փափագյանի հասարակական աշխարհայեցողությունը և գրա-քննադատական տեսությունները:

Չափազանց արժեքավոր այդ հոդվածը ներկայումս կորել ե անհետք «Նոր Խոսք» հանդեսի մնացյալ այն գործերի հետ, վորոնք ընկել են Բագվա ժանդարմերիայի ձեռքը: Յերկրորդ կարևոր գործը—վոր մնացել եր դժբախտաբար նույնպես անավարտ՝ նվիրված եր սոցիալ-դեմոկրատական պրոբլեմների քննությանը:

Դա—Անդրկովկասի տնտեսական զարգացման պատմություն եր, այն աշխատանքը, վորը միշտ գրավել ե Շահումյանի առանձին ուշադրությունը: Այդ թեմայի մասին Շահումյանը խոսում եր առանձին վոգևորությունամբ: Նա ծրագրել եր և ուսումնասիրության հիմնական սխեման և՛ ընդհանուր բովանդակությունը: Նա հավաքել եր նաև վորոշ նյութ իր թեզերի հիմնավորման համար: Սա-

կայն այդ աշխատանքն ևս Շահումյանը չի կարողանում ավարտել, վորովհետև բռնկվում է մեծ իմպերիալիստական պատերազմը, բռնկվում է և մեծ Հոկտեմբերյան Հեղափոխությունը ընդդեմ պատերազմի, և միշտ անհաշտ Շահումյանը նորից նետվում է կռվի դաշտը:

III

Շահումյանի կյանքի ամենաբնորոշ շրջաններից մեկն է նրա գործունեությունը Բագվա առաջին Կոմմունայի կազմակերպման մեջ:

Բագվա առաջին Խորհրդային կառավարության տապալման որից անցել է արդեն յոթ տարի: Այդ յոթ տարվա ընթացքում շատ բան է գրվել Բագվա պրոլետարիատի ղեկավարների վողբերգական կյանքի և Ստեփան Շահումյանի հեղափոխական գործունեության մասին 1917—18 թվականներին:

Այնուամենայնիվ, այժմ ել Բագվի Խորհրդի պատմության մի քանի եջերը պատած են անորոշություններ և մշուշով: Այդպես է մասնավորապես Շահումյանի քաղաքական ստրադեգիայի պատմությունը: Այդ յուրորինակ ստրադեգիան առանձնապես վորոշակի գծված է Շահումյանի ճառերում: Հենվելով հենց այդ անմիջական աղբյուրի վրա ել պետք է քննենք և Բագվա Խորհրդի այն յուրորինակ տակտիկական վարքագիծը, վոր գծվել է 1917 թ. Շահումյանի կողմից:

Պետք է մոռանալ յերբեք, վոր այդ ժամանակ Խորհրդային Հանրապետության կացությունը սոսկալի ծանր էր: Խորհրդային Ռուսիայի խոշորագույն վայրերը գտնվում էին թշնամիների ձեռքին: Յեվ մի շարք քաղաքներ, Կիև, Խարկով, Ռոստով, Ոդեսսա և այլ ռայոններ մի քանի անգամ անցել են մի ձեռքից մյուսը:

Բագու քաղաքի կացությունը անհամեմատ ավելի ծանր էր, քան հիշված կենտրոնների դրությունը: Ապշերոնյան վողջ թերակղզու և առանձնապես բան-

վորական շրջանի բնակիչները իրենց պարենավորումը 1917-ին ստանում էին մասամբ Կենտրոնական Ռուսիայից, մասամբ ել Հյուսիսային Կովկասից: Բագվա նահանգի կտրվածությունը Ռուսիայի հողաշատ շրջաններից և հաղորդակցության խանգարումը անհրաժեշտաբար ծանրացնում էին բագվեցիների առանց այն ել դժվարին կացությունը: Փաստորեն 1918-ին Բագուն ամեն կողմից պաշարված մի քաղաք էր, վորի բնակչությունը ստիպված էր բավականանալ լոկ այն չնչին պաշարներով, վորոնք մնացել էին քաղաքային պահեստներում:

Խորհրդային Հանրապետության կենտրոնական ռայոնները 1917—18 թ. արևմտյան Ֆրոնտում իրենց դեմ ունեյին այնպիսի հզոր մի հակառակորդ, վորպիսին գերման իմպերիալիզմն էր:

Հյուսիսում, Մուրմանում և Սրխանգելսկում գործում էին անգլիական գործառնություններ: Հարավային շրջանում գտնվում էր կողակային հակահեղափոխությունը:

Սրևելքից ուղղվում էին Մոսկվայի վրա Ֆրանսիացիների ձեռքով կազմակերպված չեխոսլովակիան բանդաները:

Բուն Խորհրդային Ռուսիայում անընդհատ շարժվում էր կազմակերպված ռեակցիան: Չափազանց ակներև էր բոլորի համար ել, վոր Բանվորա-գյուղացիական կառավարությունը թույլ է և չի կարողանա յերբեք գեթ մոտակա որեքին վորևե շոշափելի ոգնություն հասցնել բագվեցիներին:

Դրան պետք է ավելացնել նաև այն, վոր անդրկովկասյան բնակչության միջին տարրերը բոյլճևստական որիենտացիան համարում էին վնասաբեր մի աղետ: Ներանց համոզմամբ «բոյլճևիզմը» անխուսափելիորեն պիտի քայքայեր Ֆրոնտը և բաց աներ Անդրկովկասի դարբասները սոված, հոգնած և կատաղած տաճկական գործառնների առաջխաղացման առաջ: Այդ պերսպեկտիվը, պետք է ասել, ուժեղացնում էր բոլոր պաշտպանողականներին

դիրքերը և հզորացնում եր նացիոնալիզմի ազդեցությունը մասսաների վրա: Մյուսուրման բեգերն ու կալվածատերերը իրենց հերթին տարածում եյին մյուսուրման գյուղացիության շարքերում այն գաղափարը, թե թյուրքիան, գրավելով Կովկասը, պետք է բաշխե բրիտանիաներից խլած հարստությունը մյուսուրման ժողովրդին:

Յերկու պարագաներում ել — բոյլշևիկների դիրքը թուլանում եր: Ազգային սուր անտագոնիզմը պատերազմի ուրերին սրվում եր ավելի ևս: Իսկ դրանից շահվում եյին առաջին հերթին նացիոնալիստական կուսակցությունները, վորոնք խմբում եյին իրենց շուրջ ամենալայն ժողովրդական տարրերին: Բազմում կացությունն առանձնապես մըղձավանջային եր:

Բազմումն եր բռնկվել ամենասուր կերպով հայ — թուրքական այն կռիվը, վոր 1905 թվականին խոր ակոս եր փորել յերկու ժողովուրդների միջև: Հայ թուրք ազգայնականների պրովակացիոն ազդեցությունն ապարդյուն չեր մնացել:

Իսկ հետագա տարիներին, 1909-ից մինչև 1907 տընտեսական պայքարը հայկական կապիտալի և յերիտասարդ թուրք բուրժուազիայի միջև ընդունել եր ավելի ևս սուր բնույթ: Այդ պայքարը ներկվում եր կրոնա-նացիոնալիստական վորոշ գույներով և խոշորագույն ազդեցություն եր թողնում հայ-թուրք հետամնաց մասսաների վրա:

Այդպիսով յերկու կռիվող կողմերն ել կանգնած եյին միմիանց դեմ միշտ կազմ և պատրաստ, ու վտարից մինչև գլուխ սպառնալիքով. հայերն ել մուսուրմաններն ել քաղաքում ունեյին իրենց սեփական ռազմական խմբերը:

Հայկական զորամասերը կանգնած եյին քաղաքի կայարանի մոտ ընկած արվարձանում: Այդ զորամասերի վողջ սպայագունդը կազմված եր «Դաշնակցություն» կուսակցությանը սպասավորող մտավորականներից:

Մյուսուրման բուրժուազիան իր հերթին, կազմակերպված եր ազգայնական «Մուսաֆատ» կուսակցության

շուրջը և բավականաչափ հաշտ եր թուրք ազնվականության հետ: Թուրք բուրժուազիան այնքալ խոր ատելություն եր տածում «դեպի յեկվորները» և մասնավորապես դեպի հայ բուրժուազիան, վոր արդեն այդ հանգամանքը թելադրում եր նրան միանալ բեգական — կալվածատիրական խմբերի հետ: Յերկու դասակարգերի ժամանակավոր այդ Միության որդանն եր «Մյուսուրման հասարակական կազմակերպությունների Խորհուրդը»: Այդ խորհուրդի մեջ մտնում եյին մյուսուրման բոլոր նացիոնալիստները և աջակողմյան «իտաիհատականները» և մուսաֆատականները և սոցիալ-հեղափոխականներն ու մենշևիկ սոցիալ դեմոկրատները¹): Ազգային համերաշխության քաղաքական այդ որդանը իր բեալ գործունեության մեջ ղեկավարվում եր ամբողջովին «Մուսաֆատ» կուսակցության հրահանգներով:

Իսկ «Մուսաֆատը» այդ ժամանակ, հենվելով «ազգությունների ինքնորոշման իրավունքի» վրա, կտրականապես պահանջում եր անջատել Բագուն և մյուսուրման Ադրբեջանը Խորհրդային Ռուսիայից:

Նավթային արդյունաբերության ազգայնացումը «Մուսաֆատի» կողմից ևս պաշտպանվում եր: Սակայն այդ ազգայնացումը պիտի կատարվեր վոչ հոգուտ բանվորագյուղացիական պետության: Մուսաֆատի տնտեսական ծրագրի համաձայն նավթային բոլոր հանքերը պիտի դառնային բացառապես տեղացի մյուսուրման բնակչության ազգային սեփականություն:

«Մուսաֆատի» այդ պահանջը չնայած իր արտասովոր բնույթին բավական մոտ և հարազատ եր թուրք

¹) Հայերն ևս ունեյին իրենց սեփական «Ազգային Խորհուրդը»: Հայկական խորհրդի մեջ մտնում եյին հայ հասարակության բոլոր վոչ մեծամասնական հոսանքները՝ կովկասահայ լիբերալները («Հայ ժողովրդական կուսակցություն»), հայ եսերները, դաշնակները և մենշևիկ սոցիալ-դեմոկրատները: Հայ Ազգային Խորհուրդն ել ղեկավարվում եր հայ բուրժուազիայի ռազմական կազմակերպության դաշնակցության հրահանգներով:

մասաներին: Նա հասկանալի յեր մանավանդ այն գյուղացիության համար, վորը ապրում եր նավթահանքերի շուրջը և պահպանում եր իր գոյութիւնը վոչ այնքան հողագործությամբ, վորքան այն պատառներով, վոր նետվում եյին նրան նավթատեղերի կողմից: Յեւ ահա այդ պարագիտար խմբերի համար, հողից կտրված և գործարանային արդյունաբերության հետ վոչ մի կապ չունեցող կիսապառպեր և լյումպեն գյուղացիության համար «Մուսաֆատի» առաջարկած «ազգայնացումը» — շատ հասկանալի մի պահանջ եր:

Դրա համար ել Ապշերոնյան թերակղզու գյուղացիութիւնը «Մուսաֆատի» ամենահիմնական և հավատարիմ բազան եր:

Սակայն «Մուսաֆատի» ուներ իր սեփական ռեալական հենարանն ևս հանձին «վայրենի դիվիդիայի»: Այդ դիվիդիան այնքան ել խոշոր չեր, բայց նա ղեկավարվում եր միևնույն հիմունքներով, ինչպես և ցարական գործը, և Բազվա պայմաններում ներկայացնում եր կարևոր ռազմական նշանակութիւն:

Պետք ե ասել, վոր հայերի և թուրքերի նման Բազվա մյուս ազգութիւնները ևս ունեյին սեփական «Ազգային Խորհուրդներ» և գործում եյին սոցիալ-հայրենասիրական և հակամեծամասնական կազմակերպութիւնների ցուցմունքով: Յեւ բոլորն ել այս կամ այն չափով պաշտպանում եյին «Ժամանակավոր կառավարութիւն» քաղաքական պլատֆորմը:

Հիշյալ կուսակցութիւններից և կազմակերպութիւններից հեռու կանգնած եր Բազվա պրոլետարիատի առաջապահ այն գունդը, վորը չափազանց թույլ եր տակավին և հնարավորութիւն չունեւր վճռական պայքար հայտարարելու ազգայնականների և հակահեղափոխականների հետդիմառ ուժեղացող բռնկին:

Այսպես եր 1917-ին Բազվի ռեյեկտիվ կացութիւնը — ճիշտ այն պահուն, յերբ Փետրվարյան հեղաշրջումից

հետո, նոր եր միայն հանդես յեկել «Բանվորական յեւ Ռազմական Պատգամավորների Խորհուրդը»:

Այդ խորհուրդը «համաձայնական» եր թե իր կազմով և թե իր վողջ եյությամբ: Մեծամասնութիւնը այդտեղ կազմված եր նացիոնալիստներից և սոցիալ-համաձայնականներից: Իզուր չեր նա յերկար ժամանակ կոչվում «Ռազմական» պատգամավորների Խորհուրդ: «Ռազմական» խոսքը չափավոր մենշեիկների համոզումով պետք ե հակադրվեր «գիւնվորական» խոսքին և դրանով արդեն հակադրեր նոր «հեղափոխութիւն» «վեհանձն» և «անաչառ» վերաբերմունքը դեպի ռֆիցերութիւնը:*

Բանվորական յուրածն այդ Խորհրդի կողքին Բազվում գործում եյին նաև ուրիշ օրգաններ: Կալիցիոն հիմունքներով կազմված «Հասարակական Կազմակերպութիւնների Գործադիր Կոմիտե»-ն ու Բազվա Քաղաքային Դուման:

Յեւ ահա Բազվա Բանվորական Խորհուրդը շնորհիվ յուրորինակ համաձայնական իր կազմին — հիշյալ կազմակերպութիւնների նկատմամբ վարում եր կատարելապես հաշտ քաղաքականութիւն և յերբեք չեր վստահանում լիկվիդացիայի յենթարկել հին օրգանները ու զրավել իր ձեռքը վողջ իշխանութիւնը:

Դրանից ոգտվում եյին առաջին հերթին նացիոնալիստական կուսակցութիւնները:

Հայ դաշնակցականներն և թուրք մուսաֆաթականները կեղծավոր ժպիտով վողջունում եյին միմիանց Խորհրդի և Դումայի պատերի մեջ, իսկ պատերից դուրս կազ-

*) Ս. Շահումյանի առաջարկով Բազվա խորհուրդը վերակոչվում ե «Բանվորական և Զինվորական Պատգամավորների Խորհուրդ» 1917 թ. նոյեմբերի 2-ին Բազվա խորհրդի լայնացրած նիստում: Տե՛ս՝ „Протоки Конференции расширенного Совета при участии представителей районных промысловых-заводских комиссий и полковых, батальонных, ротных, корабельных и др. комитетов“ „Известия“ № 177 от 9 ноября 1917 г.

Ապա դրանից հետո ձեռնարկվում է նաև Բագվա խորհրդի վերընտրությունների գործին:

1917 թ. հոկտեմբերի 31-ին լայնացրած Բագվա խորհուրդը անում է առաջին վճռական վորոշումը և քվեարկում է մի բանաձև, վորով «անհրաժեշտ է համարվում իր առաջ դնել՝ ամբողջ իշխանությունը գրավումը Բագվա քաղաքում—վորպես առաջիկա նպատակակետ»:

Այդ բանաձևը ընդունվում է ձայների ճշող մեծամասնությամբ: Վորոշման դեմ ձայն են տալիս միայն եսերներն և մենշևիկներն, վորոնք վորձում են կռվել նոր խորհրդի դեմ այսպես կոչված «Հասարակական Ապահովության Կոմիտե»-ի կազմակերպության միջոցով: Հիշյալ կազմակերպությունը հրատարակում է մենշևիկների ձեռնեցություններ, նույնիսկ մի քանի խղճուկ թերթիկներ: Սակայն նորելուկ կոմիտեյի պրոպագանդը վոչ մի արձագանք չի գտնում մասսաների մեջ և շատ շուտ վերջացնում է իր կարճատև գոյությունը: Այնուամենայնիվ, անփառունակ իր մահից հետո ևս, մենշևիկյան հակահեղափոխությունը շարունակում է իր հինավուրց պայքարն և պրոպագանդը:

Բագվա խորհուրդը, չնայած իր այլափոխություն, դարձյալ ազատագրված չէր լիովին հակահեղափոխական տարրերից: Բագվա խորհրդում մնացել էին տակավին և դաշնակներ, և՛ մուսաֆաթականներ, և՛ աջակողմյան եսերներ—այլ խոսքով այդտեղ կային բոլոր այն կուսակցությունները, վորոնք իրենց ծրագրով և դասակարգային եյուրթյամբ շահագրգռված էին խորհրդային իշխանության տապալման մեջ:

Դրա համար ել հոկտեմբերի 31-ի բանաձևից հետո ևս կուսակցական պայքարը Բագվա խորհրդում չի ընդձև կերպարանք:

«Սոցիալ-համաձայնական» և նացիոնալիստական կուսակցությունները քննում էին իրենց «խորհրդային աշխա-

տանքը» վորպես մասսաների դասակարգային ինքնագիտակցություն մթափնեցման և նացիոնալիստական պրոպագանդի մի խորամանկ միջոց: Սակայն պետք է ասել, վոր խորհրդային իշխանությունն առորյա պրակտիկան թեւադրում էր հաճախ հիշված կուսակցությունների բանվորական Ֆրակցիաներին գործել միանգամայն անկախ իրական Ֆրակցիաներին գործել միանգամայն անկախ իրենց ինտելիգենտ ղեկավարների դիրեկտիվներից: խորհրդի նիստերին հաճախ քննվում էին աշխատանքի և կապիտալի պայքարի հետ կապված ամենասուր պրոբլեմներ, և բոլոր այդ դեպքերում բանվոր-դաշնակցականները և բանվոր-մուսաֆաթականները իրենց ձայները միացնում էին բոլշևիկական Ֆրակցիայի ձայներին ընդդեմ ավելի կազմակերպված եսերո—մենշևիկական բոլկի: Հաճախ մի քանի բանվորներ անշատվում էին այդ բոլկից և խախտում էին կուսակցական դիսցիպլինը, միանալով բոլշևիկներին: Ամենից շատ յուրորինակ այդ «խախտումները» տեղի էին ունենում տնտեսական խնդիրների քննության ժամանակ: Բանվորների դասակարգային գիտակցությունը ասում էր նրանց, վոր բոլշևիկների առաջադրած պրապագանդը ավելի մոտ է համապատասխանում պրոլետարատի իշխաններին: Մեծ դեր էր կատարում բոլոր այդ պայքարներում Շահումյանի և Զապարիձեյի ավտորիտետը: Թեւեթ այդ պարագլուխներն էլ Բագվա պրոլետարիատի բոլշևիկական ղեկավարներն էին մեծագույն համակրանք: Նրանց ղեկավարում էին բոլորը: Նրանց հավատում էին առանց ճանաչում էին պատճառով սոցիալ-համաձայնական վարսնությունների: Այդ պատճառով սոցիալ-համաձայնական կուսակցությունները չափազանց մեծ դժվարության կարողանում զսպել խորհրդում գործող բանվորական Ֆրակցիայի անդամներին:

Այնուամենայնիվ հակասովետական կուսակցությունների ներկայությունը Բագվա խորհրդում մեծ բարդություններ էր առաջ բերում խորհրդային աշխատանքի մեջ:

Շնորհիվ հենց այդ կուսակցությունների ներկայությունը խորհրդի և գործադիր կոմիտեյի նիստերը նմանում էին խորհրդի

եյին հաճախ բուրժուական պարլամենտների նիստերին: Խորհրդի միջոցով և պատասպարված Խորհրդի ավտորիտետի ներքո վարկաբեկված համաձայնականներն և նացիոնալիստները հնարավորություն եյին ստանում նորից ներս խուժել մասսաների մեջ և շարունակել այդտեղ իրենց հին հակահեղափոխական գործունեությունը: Յեւ ի վերջո այս կամ այն կերպ բոլոր այդ հակաբուլժեական պրոպագանդը թողնում եր իր վորոշ ազդեցությունը պրոլետարիատի կիսագիտակից խավերի վրա և դանդաղեցնում եր նրա դասակարգային արթնացման տեմպը:

Բուլժեական կուսակցությունը այդ ժամանակ վոչ մի ռազմական ույժ չունեւր—այնինչ մուսաֆաթականները և դաշնակցականները հենվում եյին կանոնավոր զորամասերի վրա:

Ռուսական հին զորքի այն հատվածներն և գնդերը, վորոնք գալիս եյին տաճկական ֆրոնտից և Պարսկաստանից, սովորաբար չեյին համաձայնվում մնալ Բագվում և ուղեւորվում եյին դեպի հյուսիս—կուբան և Ռուսաստան: Դա այն եպոխան եր, յերբ ցարական Ռուսիայի ամբողջ զորքը անկազմակերպ շարաններով փախչում եր «տուն» միակ բուլժեական զինվորական կազմակերպությունը—«Կովկասյան Բանակի Ռազմա-Հեղափոխական Կոմիտեն» եր, վորը նոր եր միայն յեկել Թիֆլիսից և չեր կարողացել տակավին ստեղծել կարմիր բանակի քիչ շատե կանոնավոր և կազմակերպված գնդեր: Յեւ ահա հենց այդ փափուկ կացությունն ել թելադրում եր Բագվա բուլժեական կազմակերպության ղեկավարներին հաշվի առնել յերկու ուժեղ նացիոնալիստական կազմակերպությունների գոյություն փաստը: Բագվա Խորհրդի բուլժեական փրակցիան չունեւր վոչ մի ռազմական ույժ և հենց դրա համար ել նա մշակել եր զարտուղի քաղաքականության մի գիծ և աշխատում եր ժամանակ շահել իր սեփական ռազմական գնդերի կազմակերպմանը նպաստելու համար: Խորհրդային իշխանության այդ թուլությունը հաշվի

եյին առնում և հակառակորդներն ու ամեն կերպ աշխատում եյին ամրացնել իրենց դիրքերը: Հայտնի ե, վոր նավթային արդյունաբերության ազգայնացման խնդիրը մի քանի անգամ քննությունն ե դրվել Բագվա Խորհրդի Գործադիր կոմիտեյի նիստերին—սակայն միշտ ել հանվել ե որակարգից մուսաֆաթականների և դաշնակցականների կտրական առարկություններից հետո: Շատ բնորոշ ե այն, վոր Գործադիր կոմիտեյի նիստերից մեկում մուսաֆաթականների լիդերը—Ռասուլ Ջադեն հայտարարել եր, վոր նավթային արդյունաբերության պետականացման վորոշումը անհրաժեշտաբար առաջ պիտի բերե արյունավոր ընդմիջարկություն: Միանման դիտողություններ քողարկված լեզվով արվել են նայել դաշնակցական պատգամավորների կողմից: Այլ խոսքով, յերկու կուսակցության հերթի պաշտպանությունից և նկարելով հայ—թուրքական կոտորածների հեռանկարը, աշխատում եյին հետադգել կապիտալիստ նավթատերերի եքսպրոպրիացիան: Պրովակացիոն այդ գործելակերպը անհետեւանք չի մնում: Բագվան ե միայն հիշել այն, վոր «Մուսաֆաթի» յեւ վերջինի կողմից կազմակերպված մուսուլմանական միտինգների պահանջով Բագվա Խորհրդի Գործադիր կոմիտեն իր ժամանակ ազատությունն եր շնորհել Թիֆլիսից յեկած և Բագվա կայարանում ձերբակալված Կովկասյան այսպես կոչված «վայրենի» զիվիզիայի գեներալներին և սպաներին:

Բուլժեական կազմակերպությունը մեծագույն ջանքեր եր թափում Բագվա հակահեղափոխության նացիոնալիստական եյություն պարզաբանման և մերկացման համար: Յեւ յեթե նա, Բագվա հակահեղափոխությունը—այնուամենայնիւ, բարձրացնում ե իր գլուխը—դատեղծվում եր շնորհիվ նրան, վոր մուսաֆաթականները ըզգում եյին, վոր հետագայում Խորհրդային իշխանությունը նրա ավելի յեւս պիտի ամրանա և դրանով արդեն վերջ

առաջ եր բերել նույնիսկ վորոշ անբավականութիւնն կոմունիստական կազմակերպութեան շարքերում:

Այնուամենայնիվ Շահումյանը առաջինն ե լինում, վոր ձևակերպում ե գործնականորեն կիրառում ե քաղաքական աֆիստիայի սկզբունքը: Յեւ վայստեղ ել, նա դեկավարվում ե ամենից առաջ միջազգայնութեան ամրացման գաղափարով: Բազմի քաղաքացիական պատերազմի «ազգային» բնույթի մասին տարածված ասեկոսեները ամենամեծ դյուրութեամբ մուտք եյին գործում մուսուլման մասսաների մեջ ամենից առաջ: Դրա համար ել Ստեփան Շահումյանը այդ պրովոկացիայի առաջն առնելու համար անհրաժեշտ եր համարում ամֆիստիայի ամենալայն կիրառումը, վորպեսզի թուրք ազգայնականները հնարավորութիւնն չունենան ասելու իրենց մասսաներին, թե «հայ մեծամասնականները» իրենք «ազգային վրեժն» են հանում թուրք ինտելիգենտից:

Բազմաքաղաքացիական կ ռիֆների ընթացքում «ազգային» մոմենտը առհասարակ կատարել ե խոշորագույն դեր:

Այդ գործոնի դերը կարելի յեր նսեմացնել Բազմազորքերի կատարյալ միջազգայնացման միջոցով: Յեթե Բազմա Սորհրդի ընտանական բազան լիներ կատարելապես միջազգային բանակը, անշուշտ այդ պարագայում «հայերի» նշանակութիւնն ել այնքան աչքի չեր զարնի: Ահա ինչու Շահումյանը քաղաքացիական պատերազմի առաջին որերից անհրաժեշտ եր համարում որ առաջ հեռացնել կարմիր Բանակի շարքերից Համագաղափին ե նրա մյուս ընկերակիցներին: Բազմա Սորհուրդը Շահումյանի ձեռներեցութեամբ նույնիսկ առանձին վորոշում ե հանում հայ ազգային զորամասերի լիկվիդացիայի մասին: Բայց պետք ե խոստովանել, վոր այդ վորոշումը լինում ե ձեվական, վորովհետեւ «ազգային զորամասեր»-ի վոխարեն ստեղծվում են հայկական կարմիր զորագնդեր, վորոնցից շատերը մնում են նույնիսկ իրենց հին ղեկավարների ներքո: Այդ բոլոր անհարթութիւնները վոչնչացնելու համար

անհրաժեշտ եր շուտափույթ ոգնութիւնն Սորհրդային Ռուսիայից: Ռուսական զորամասերի ներկայութիւնը ե գերակշռութիւնը Բազմում անհրաժեշտ եր ամենից առաջ Բազմի կարմիր Բանակի միջազգայնացման ե Ֆրոնտի ամրացման համար: Դրա համար ել Շահումյանը կենտրոնին ուղղված իրնամակներում, անդադար կրկնում եր հենց այդ պահանջը ե խնդրում եր Բազու ուղարկել բացառապես ռուսներից ե լատիշներից բաղկացած զորամասեր:

Սորհրդային Իշխանութեան դրութիւնը Բազմում ծանր եր առանձնապես այն պատճառով, վոր Բազմի հակահեղափոխութիւնը միայնակ չեր ե հենվում եր մի կողմից տաճիկների, իսկ մյուս կողմից Թիֆլիսի հակահեղափոխականների ոգնութեան վրա:

Բազմա վրա եյին արշավում կանոնավոր տաճկական զորամասեր, վորոնց գլխին կանգնած եյին փորձված գերման ե տաճիկ ոֆիցերներ: Չափազանց ակներե եր արման ե տաճիկ ոֆիցերներ: Զափազանց լսողոր իմպերիալիզմ, վոր Բազուն դառնում ե յերկու խոշոր իմպերիալիզմական միութիւնների, գերմանական ե անգլիական իմպերիալիզմի առաջխաղացման հիմնական նպատակալիտը¹⁾:

Տաճկա-գերմանական ույժերը կամենում եյին գրավել Բազուն ե ապա այդտեղից նետվել Պարսկաստան ու Թուրքեստան: Յերկու այդ յերկիրներն ել ընկած եյին Հնդկաստանի մոտ ե հենց դրա համար ել ներկայացնում եյին իրենցից Հնդկաստանը պատսպարող բնական պատնեշներ:

Անգլիացիք միևնույն այդ նկատառումներով ցանկանում եյին իրենց ձեռքը ձգել Բազուն, ապա անցնել

1) Այդ քաղաքականութեան բնորոշման համար բավական հետաքրքրական են Լյուդենդորֆի խորհրդածութիւնները (Տեւ. Լյուդենդորֆ; Мои воспоминания о войне. 1914—1918 гг. Том II-ой, Госиздат, Москва, 1924.

Անդրկովկաս և խափանել տաճկա-գերման միացյալ ուլժի արշավանքը¹⁾։

Ահա այդպես եր Բագվի կացութիւնը։

Այդպիսի պարագաներում վոչ սովետական, հայկական ուժերի մասնակցութիւնը քննվում եր, վորպես ժամանակավոր տաքտիկական մի միջոց քաղաքի ռազմական պաշտպանութեան համար։

Այդպիսի պաշտպանութիւնը այն նշանակութիւնն ունեւր, վոր հնարավորութիւն եր տալիս Բագվա խորհրդին շահել մինչ այն մոմենտը, յերբ մի կողմից ռզնութիւն կգար Ռուսիայից, իսկ մյուս կողմից ել կազմ ու պատրաստ կլինեւր Բագվում կազմակերպվող կարմիր բանակը։ Նոր և ամբողջ ռազմական ուլժի այդ կազմակերպումը միայն կարող եր միջազգայնացման յենթարկել ֆրոնտը։ Այդ նոր ուլժի ամփոփման և կազմակերպման մոմենտից լիկվիդացիայի պիտի յենթարկվեւր զորքի հին դեկավարութիւնը և պիտի վերջնականապես ուղղվեւր մեծամասնական գիծը։

Ռազմական ուլժերին Շահումյանն առանձին կարեւորութիւն եր տալիս վոչ միայն նրա համար, վոր այդ ուլժերը կարևոր եյին Բագվա պաշտպանութեան համար։

Բագվա պրոլետարիատը Շահումյանի համոզմամբ, պիտի արշավեւր առաջ և քանդեւր Անդրկովկասյան հեղափոխութեան հանդեպ ծառացած բոլոր ուրիշ պատենները։

Բագվա պրոլետարիատը պիտի վառեւր սոցիալական հրդեհ վողջ Անդրկովկասում, վերջ տար բուրժուա-հողատիրական տարրերի տիրապետութեանը յեվ հաստատեւր «Միջազգային» բանվորա-գյուղացիական կառավարութեան իշխանութիւնը։

Յեւ ահա պատմական այդ միասիայի կատարման համար Բագվա խորհուրդը պիտի ունենար մի բեալական

¹⁾ Այդ մասին տես՝ Денстервилль Британский империализм в Баку и Персии, 1917—1918 (Воспоминания), Тифлис 1925.

հենարան։ Այդ հենարանը պիտի լինեւր կալվածատիրական լուծի դեմ յեւած ապստամբ գյուղացիութիւնը։

«Վորքան շուտ մոսուլման—գյուղացին կխլե հողը իր պամեշչիկներէից, այնքան ավելի շուտ կկապվի նա խորհրդային իշխանութեան հետ»—այդպես եր բնորոշում Շահումյանը խորհրդային իշխանութեան ապագան Անդրկովկասում։ Յեւ հենվելով հենց այդ սկզբունքային դրութեան վրա, նա խորհրդային իշխանութեան դիրքը համարում եր կայուն և զորավոր։

Բագվա ռազմական պաշտպանութիւնը, Բագուն պաշարող տաճկական զորքերի ցրումը և խորհրդային բանակի ռազմական առաջխաղացումը դեպի Անդրկովկասի խորքերն անհրաժեշտ միջոցներ եյին Բագվա խորհրդի ազատագրական արշավի աջակցման համար։ Իսկ Բագվա խորհրդի հիմնական նպատակը պիտի լինեւր բեգական կալվածատիրութեան բռնագրավումը և հողային խնդրի արվածատիրութեան լուծումը։ Կովկասյան հակահեղափոխութիւնը մատական լուծումը։ Կովկասյան հակահեղափոխութիւնը Շահումյանի համոզմամբ պիտի կորցնեւր իր ուլժը հենց այն մոմենտից—այն որից, յերբ գյուղացիութիւնը կխլեւր իր պամեշչիկներէից հողը։

խորհրդային գործադատների առաջխաղացումը մոսուլման ըայոններում, բեգական հողատիրութեան եքսպրոպւման ըայոններից, մոսուլման գյուղացիական կոմիտեների կազմակերպումը—այդ բոլոր միջոցներն անհրաժեշտաբար պետք ե թուլացնելին Բագվա վրա արշավող տաճկական զորքի և Կովկասյան հակահեղափոխութեան առաջխաղացման թափը։

Շահումյանի ճառերում, Բագվա ժողովրդական Կոմիտեների առանձին այն կոչի մեջ, վոր ուղղված եր միասարնների առանձին այն կոչի մեջ, վոր ուղղված եր Անդրկովկասյան մոսուլման գյուղացիութեանը, մոսուլման գյուղացիութեան պատգամավորական առաջին խորման գյուղացիութեան պատգամավորական առաջին խորման հրդեհի նիստում արտասանած Շահումյանի խոսքի մեջ վերը շեշտված գիծը յերևում ե ավելի քան վորոշակի և ուժգնորեն։

Բազմա խորհրդի վողջ գործունեությունը ղեկավար սկզբունք է ունեցել հիմնական այդ պերսպեկտիվը՝ բեգերի և խաների լծից ազատագրված Անդրկովկասյան գյուղացիության միությունը Բազմա պրոլետարիատի հետ:

Դրանում էր կայանում Շահումյանի և Ջապարիձեյի պաշտպանած ստրատեգիան:

Բոլոր մյուս ձեռնարկություններն ու քայլերը, այս կամ այն ուժերի ժամանակավոր ոգտագործումը, կոմպրոմիսները տնտեսական քաղաքականության հարցերում, ժամանակավոր համաձայնությունը այս կամ այն ոտար կազմակերպության հետ—այդ բոլորը պետք է ոժանդակեր մեկ հիմնական նպատակին, պետք է ոգներ մեծամասնականներին պահպանել իրենց ձեռքում իշխանությունը մինչ այն մոմենտը, յերբ հողը կխլվեր կալվածատերերից և հանձնվեր մոնսոնական գյուղացիությանը ու կկազմվեր Բազմա պրոլետարիատի ամենաուժեղ և հզոր զինակիցը՝ գյուղացիական պատգամավորների խորհուրդը:

Ինչպես ել չգնահատենք մենք անցյալ որերի պատմությունը, ինչպիսի «սխալներ» և թեքումներ ել մենք այսօր—յոթը տարի անց, չզիտենք անցյալի գործունեություն մեջ, այնուամենայնիվ, մի բան մենք պարտավոր ենք արձանագրել—այդ այն է՝ վոր հիմնական և գլխավոր կետում Շահումյանի պաշտպանած տակտիկան ճիշտ եր և ուղիղ:

VI

Ընկնում է Բազմա խորհուրդը նրա համար, վոր մի կողմից նա իր դեմն ուներ Բազմում սոցիալ-համաձայնականներին և արշավող իմպերիալիստներին արտաքին ֆրոնտում,—իսկ մյուս կողմից ել չափազանց անփորձ եր և չեր կարողանում գործադրել հակահեղափոխության դեմ բոլոր անհրաժեշտ միջոցները:

Բազմա պաշտպանության գործը հանձնված եր այդ ժամանակ բացառապես Բազմա պրոլետարիատին և այն

չնչին սովետական զորամասերին, վոր ուղղված եյին Ռուսիայից:

Այդ պաշտպանությունը խիստ դժվարին գործ եր, վորովհետեւ Բազմի վրա եր արշավում կանոնավոր իմպերիալիստական մի զորք, վոր հենվում եր ամենից առաջ տեղական մոնսոնական բնակչության կողմից հասցրված աջակցության վրա:

Ինչ վերաբերվում եր հայ դաշնակցական զորամասերին, պետք է ասել, վոր դրանք Բազմա պաշտպանության գործում կատարել են բացառապես բացասական դեր: ¹⁾

Այդ զորամասերը շատ սովորական հայդուկային և «խրմբապետական» գնդեր եյին, վորոնք շատ քաջ կերպով պատերազմում եյին խաղաղ բնակիչների հետ, սակայն նույնքան մեծ քաջությունը նահանջում եյին իսկական ռազմի դաշտից:

Առանձնապես բացասական դեր են կատարել Համազասպի զորամասերը Շամախու գավառում: Վայրենի գայ-

¹⁾ Իզուր են այժմ դաշնակցականները սուտ հերյուրանքներով աղճատում անցյալի մոռյալագույն այդ եջերը: Դաշնակցական Շաթիրյանը Բոստոնում հրատարակվող «Հայրենիք»-ում (1923 թիվ) ձգտում է ամեն կերպ արդարացիել դաշնակցականների գործունեությունը Բազմում: Մենք մեկ խորհուրդ կըտայինք բոլոր Շաթիրյաններին: Թող դրանք թերթեն իրենց բարեկամ այդտեղ ել կարգան հենց իրենց զորամասերի «քաջությունները» մասին: Դիտարկելով Բազմի վրա կանչել դաշնակցականները. Ռոստոմ Զորյանը, Սբրամ Գյուլխանդանյանը և Սարգիս Արարատյանը: Յեվ ահա հենց այդ Դիտարկելով ել նկարագրում է ամենաբացասական գույներով դաշնակցական զորամասերը և արձանագրում է, վոր դրանք միանգամայն անընդունակ են յեղել վորպես զինվորական ուժեր: Միաժամանակ Դիտարկելով շեշտում է, վոր Բազմի հնարավոր կրկին պաշտպանել, յեթե միայն այդ հայկական զորամասերը լինեյին ավելի կանոնավոր և ավելի կազմակերպված: Անգլիական զենքերալի այդ հայտարարությունները սառը ջուր են մաղում «Հայրենիքի» այսօրվա ստրատեգիների գլխին:

նակատաղի թշնամիները ստանում են խիստ պատասխանատու պաշտոններ թե խորհրդային հիմնարկություններում և թե կարմիր բանակի մեջ:

Իսկ մասնաճյուղերը, մանավանդ նրանք, վորոնք սկսել էին արդեն սթափվել և անշատվել մենչևիկներին, եսերներին և դաշնակցականներին, նորին սկսում են հաշտվել իրենց տապալված կուռքերի հետ:

Ոգտվելով դրանից, Բագվա սոցիալ-համաձայնականները հետագայում ամեն մի առաջարկ և հակահեղափոխական ամեն մի ձեռնարկություն գունափորում էին «սովետական» գունով:

Շատ բնորոշ է այն, վոր հակահեղափոխական առաջին ապստամբությունը Բագվա խորհրդային կառավարության դեմ նույնպես կրում էր, վորքան էլ այդ տարրի նակ չի, «հեղափոխական» և «սովետական» ձեռնարկության բնավորություն:

Բագվի «ապստամբները» վորոշել էին, ինչպես հայտնի յե, տապալել միմիայն ժողովրդական Կոմիսարներին նախագահ՝ Ստեփան Շահումյանին: Կարմիր բանակին ուղղված իրենց կոչում, նրանք բանվորներին գրավելու համար հայտարարել էին ի միջի այլոց հետևյալ լոգունները — «Կեցցե Ռուսաստանի Փեղերատիվ խորհրդային Հանրապետությունը: Կեցցե Կարմիր բանակը: Կեցցե Անգլիական զորաբանկը»:

Արդեն տակտիքական խորամանկ այդ պրիմից յերևում է, վոր խորհրդային իշխանությունը Բագվում չափազանց ժողովրդական մի իշխանություն էր և այդ հանգամանքը թելադրում էր նույնիսկ ամենամոլեգին հակահեղափոխականներին հանդես գալ «խորհրդային զգեստներով»:

Ապստամբությունը շատ շուտ ձնշվում է: Բռնվում են և անգլիացիների կողմից կաշառված «ապագա» «Նոր կառավարություն» նախարարներն, Իվանով յեվ Կիրիլենկո: Սակայն ագիտացիան հոգուս անգլիացիների չի դադարեցնում դրանից հետո յել:

Քայքայելով ֆրոնտը Բագվից դուրս, սոցիալ-համաձայնականները քայքայում էին և ներքին ֆրոնտը: Որ ու գիշեր նրանք լուրեր էին տարածում «հարուստ» և «հզոր» անգլիացիների մասին, «վորոնք գտնվում են Պարսկաստանում և ցանկանում են ոգնության ձեռք մեկնել Բագվեցիներին»: Որ ու գիշեր քննադատում էին նրանք մեծամասնականներին, վորոնք արգելում են «բարերար» ուլժին մտնել Բագու և ազատել խաղաղ բնակիչներին կոտորածից»:

Յեվ այդպիսի մղձավանջային միջավայրում էլ և ստեղծվում այն ուլժը, վոր նպաստում է խորհրդային իշխանության տապալման:

Սով քաղաքում, — անկազմակերպ բանակ ամեն կողմ: Նահանջող և լքված խմբեր: Կազմակերպված մենչևիկներ, եսերների և դաշնակցների բլոկ նավթահանքերում: Ոֆիցերության և հակահեղափոխական լակեյների պրովակացիա բանակի մեջ:

Յեվ այդ բոլորի հանդես անըհատ հաղթանակող և սրենթաց կերպով առաջ արշավող ու քաղաքի պատերի տակ կանգնած կանոնավոր իմպերիալիստական զորաբանակ, վոր ամեն բուլե կարող էր ներս խուժել քաղաք:

Յեթե խորհրդային ռուսական զորամասերը լինեյին ուժեղ յեվ կազմակերպված, խորհրդային իշխանությունը գուցե և կարող կլլինեք հարվածել մի կողմից հակահեղափոխականներին, իսկ մյուս կողմից քաղաքի վրա արշավող զորքերը:

Սակայն նա չունեք ընտանական այդ ուժը:

Նրա դեմ էր կանգնած ամենից առաջ ծովային նավաստի զինվորությունը և Բագվա ռազմականները, վորոնք այդ ժամանակ ամբողջովին սպասավորում էին հակահեղափոխականներին:

Նրա դեմ էր զորքի մեծամասնությունը, և հրամանատարական վողջ կազմը:

Նրա դեմ էր վերջապես խաբված, լքված, հուսա-

հատված Բագվա պրովետարիատը, վոր գրեթե բոլոր բայններում ձայների ճնշող մեծամասնությամբ վորոշում ե միանալ սոցիալ—համաձայնականների բանաձևին և ոգնություն կանչել «յերրորդ ուլօի» ներկայացուցիչներին—անգլիացիներին:

Նույնպիսի վորոշում ե հանում և Բագվա բանվորական, գյուղացիական և զինվորական պատգամավորական լայնացրած խորհրդի նշանավոր նիստը: Միաժամանակ այդ վորոշման հետ եսերական կուսակցության վարիչները կարգադրությամբ բենգին ե ուղարկվում են զելի: Իսկ այդ նշանակում եր, վոր մի քանի որից հետո անգլիական առաջին խմբերը Բագու կրմտեն:

Պարտությունը ակներև եր: Յեվ այդ պարտությունը հաշվի առնելով ել Շահումյանը վերջին ճիգն ե անում համոզելու պրովետարիատին և խորհրդի բանվոր պատգամավորներին: Այդտեղ նա հանդիսանում ե իր տաղանդավոր այն ճառը, ուր նա ամենախիստ քննադատության ե յենթարկում անգլիացիների բոլոր պաշտպաններին:

Այդտեղ նա նորից շեշտում ե այն, վոր անգլիացիները չեն կարող մեծ զորք բերել Բագու, վոր նրանք Բագու կգան կովկասում ամրանալու համար և կռիվ կմղեն հենց տեղական ուլօերով, այլ վոչ անգլիական շարքերով:

Այդտեղ նա կոչ ե անում խմբել խորհրդային Մեծ Հանրապետության շուրջը և կազմակերպված շարքերով պայքարել Բագվի վրա արշավող զորքի դեմ մինչ այն մոմենտը, յերբ Ռուսաստանից ուղարկված զորքերը կկարողանան Բագու հասնել:

Սակայն, Բագվա խորհուրդը սոցիալ—դավաճանների առաջարկությամբ հանում ե իր հայտնի վորոշումը «անգլիացիներին ոգնության կանչելու» մասին: Դրանից հետո մեծամասնական կառավարությունը հրաժարվում ե իշխանությունից—չկամենալով դավաճանել բանվորա—գյուղացիական հեղափոխության հիմնական սկզբունքներին:

Իր հայտնի այն գրություն մեջ, վոր գրում ե Շահումյանը խորհրդային իշխանության տապալումից հետո, հետևյալ խոսքերով ե բնորոշում կացությունը:

«Մենք չենք կարող լինել այն մարդկանց թվում, վորոնք անձնատուր են լինում տաճկական փաշաներին, փրկում են իրենց կաշին, մատնելով ոռուսական զորքերն ու բոլշևիկներին տաճկական բանդաներին,—և վոչ ել նրանց թվում, վորոնք, չնայած հայրենասիրության մասին արտասանած իրենց ճառերին՝ պատրաստ են հանձնել Բագուն անգլիացիներին: Մենք վորոշեցինք փրկել Ռուսաստանի խորհրդային իշխանության հավատարիմ հեղափոխական զորքերը: վորպեսզի՝ սպասելով Աստուխանից յեկող զորքերին՝ նրանց հետ միասին կռիվ հայտարարենք յերկու ճակատի վրա—տաճկական ու անգլիական իմպերիալիզմին—և ազատենք Բագուն հեղափոխական խորհրդային Ռուսաստանի համար: Խեղճ ու կրակ քաղցնիններն ու ոտար դեմագոգները գոռում են բոլշևիկներին փախուստի ու վախկոտության մասին: Այդ ասում են դաշնակցության ներկայացուցիչները, վորոնք հենց իրենց ծանր բուրժուական եյություն ու վախկոտության հետեվանքով դեմորալիզացիայի յենթարկեցին իրենց տրամադրության տակ յեղած կուռ զորքերը և վորոշեցին սպիտակ դրոշակ բարձրացնել: Այդ ասում են եսերներն ու մենշևիկներն, վորոնք նույն քաղցենիական պանիկայից սարսափած սկսեցին ճչալ անգլիացիներին մասին, մինչդեռ հնարավոր եր իր ժամանակին վոտքի հանել ամբողջ պրովետարիատը:

Մենք ծանր որեր ենք ապրում: Դաշնակների դավաճանությունն ու անգլիացիների շանտաժը շատ շուտով կպարզվի պրովետարիատի համար յեվ այն ժամանակ վա՛յ խաբեբաներին ու դավաճաններին»:

Անգլիացիները գալիս են Բագու: Մնում են առժամանակ այդտեղ: Յեվ ապա քիչ հետո փախչելով կոտորածի և ավերի են մատնում քաղաքը: Դրանց հետ փախ-

չում են բոլոր սոցիալ—դավաճանները—և ամենից առաջ անգլիական իմպերիալիզմի հայկական բաղձները—Համազասպները, Գյուլիսանդանյանները և Արարայանները:

Կատարվում է բառացի ճշմարտությամբ Շահումյանի մարգարեական նախագուշակումը: Անգլիական գեներալ Դենստերվիլին ուղղած իրենց նամակում Բազվա հակահեղափոխական կառավարության նախարարները խոստովանում են իրենց գործած սխալը և քննադատելով Դենստերվիլին պարզորոշ կերպով հայտարարում են, վոր «Բաղաքի ռազմական պաշտպանությունը համար Բագուն մեծամասնականներից ավելի շատ բան է ստացել, քան անգլիացիներից» և յեթե իրենք չխաբվեյին անգլիացիների խոստումներից և ապավինեյին խորհրդային իշխանությունը Բագուն չեք հասնի հուսահատական դրություն: Իր հերթին, պատասխանելով ուշացած այդ խելոքներին «Դենստերվիլը» հայտարարում է, վոր ինքը վոչ մի դրական խոստում չի տվել իր գործերի քանակի մասին—և վոր նա նպատակ է ունեցել միայն «ոգնել» բնակիչներին անգլիական իր կազմակերպությամբ:

Յերկու կողմերն ել, ինչպես տեսնում ենք, հաստատում են հակառակ իրենց կամքին այն բոլորը, ինչ վոր նախատեսել և այնքան սուր կերպով բնորոշել է իր վերջին խոսքերի մեջ Ա. Շահումյանը:

Գուցե հենց դրա համար ել, Բազվա հակահեղափոխականները ձեռք են բարձրացրել նրա և մյուս կոմիտարների վրա, խարդախ կերպով ել ուղարկել են բանտ Բազվա կոմմունայի ղեկավարներին և ապա նույնքան ստոր կերպով գնդակահարել Թուրքեստանի ավագոտ անապատների մեջ:

Իրանց ոգնում է և անգլիական իմպերիալիստների կառավարությունը, վորը շտապում է ի կատար ածել ավագակային ձեռնարկը: Ծանրները, մենչեվիկներն և հայ դաշնակները ցանկանում եյին վերջին այդ ստոր գործողությամբ անհետացնել իրենց հանցագործություն-

ներին վիաններին և դատավորներին ու գլխատել կովկասյան հեղափոխությունը:

Սակայն այդ հեղափոխությունն այսոր կայուն է և ամուր: Յեվ նա ինքն ել հանդես է գալիս, վորպես դատավոր նրանց հանդեպ, վորոնք չեն կորցրել իրենց հույսերն և այսոր ել պատրաստ են կրկնել արյունոտ անցյալի ավանսյուրայի փորձերը:

Կա և կենդանի վիան:

Դա—Բազվա պրոլետարիատն է, վոր իր կաշվի վրա զգացել է սոցիալ—համաձայնականների իշխանության փաղցրությունը, տեսել է և՛ ազգայնականներին և քաղաքակիրթ անգլիացիներին—ու խրատված անցյալի դառն փորձերից վերջնականապես հրաժարվել է հսկայական իր այն սխալից, վորի զոհ են ընկել Բազվա 26 կոմունարները:



Главлит № 46165.

Тираж 1000.

Тип. Госиздата С. С. Р. Армении, Москва, Армянский пер., 2.

ԳԻՆԸ 60 ԿՈՊԵԿ

Հայաստանի Հանրապետություն

2013

ՀՀ Ազգային գրադարան



1863

NL0035230

